

1(604)

26.01.2021

Հրատարակում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն և գիտաբար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՀԱՅԻ ԱԶՆԻՎ ԿԵՆՍԱՐՄԱՏԸ ՄՆԱՅԵԼ Է ԱՆՓՈՓՈՒՍ

Անտրամաբանական է այսօր խոսել պարտության մասին, երբ դարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը դեռևս ավարտված չէ: Ընդամենը հայտարարվել է հրադարի համաձայնության վերաբերյալ ինչ-որ փաստաթղթի առկայության մասին, որի տակ հակամարտող կարևոր կողմը՝ Արցախի Հանրապետությունը, չի ստորագրել, իսկ բանակցային կողմերից մեկի՝ Հայաստանի Հանրապետության, ստորագրությունը կասկածելի է: Համենայն դեպս, այդ թատերականացված արարողությանը ՀՀ պաշտոնական ներկայացուցչի մասնակցությունը հրապարակավ չի ցուցադրվել:

Մենք դեռ առիթ ու հնարավորություն կունենանք վերլուծելու և գնահատելու անցած պատերազմում մեր անհաջողությունների բուն պատճառները: Մեծ հաշվով դա եղել է ոչ թե պատերազմ՝ դասական չափանիշներով, այլ ցեղասպանության բացահայտ փորձ: Անհերքելի փաստ է, որ փոքրիկ Արցախի դեմ ռազմական խոչորածովալ գործողություններ են իրականացրել Ադրբեջանը, Թուրքիան, Պակիստանը, Իսրայելը, էլ չենք խոսում արաբ վարձկանների մասին: Նպատակը եղել է արցախցիների հայրենագրվում ու նրանց ֆիզիկական ոչնչացումը: Այո, մենք մեծաքանակ զոհեր ենք տվել, կորցրել մեր պատմական հայրենիքի մի մասը. ցավ ի սիրտ բոլորիս... Այդպես եղել է նաև անցյալ դարի ինքնունականների սկզբներին, երբ Արցախի տարածքի կեղծ թշնամու վերահսկողության տակ էր, չունեինք ձևավորված կանոնավոր բանակ, անհրաժեշտ զենք ու զինամթերք: Բայց հո՞ հաղթեցինք և դեռ ավելին՝ ընդարձակեցինք մեր անվտանգության սահմանները:

Հիմա ունենք ինքնուրույն կարգավիճակ, որը չեն ժխտում նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ երկրները: Ինչքան էլ Ալիևը հոխորտա, միևնույն է, ստատուս-քվոն է, բնականաբար, արցախցիների ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացմամբ ու ճանաչմամբ:

Մեզ մնում է թոթափվել պարտվողական ու անկումային տրամադրությունից, հավաքել ուժերը, միաբանվել ու շարունակել պայքարել: Դժբախտաբար, մեզ վիճակված է ապրել ցեղասպանների հարևանությամբ, և դրա հրամայականը մշտապես զգոն և ուժեղ լինելն է: Չմոռանանք, որ նույն այդ քոչվոր համահավաք ցեղին երբևէ հաջողվել է երկրի երեսից ջնջել Բյուզանդիայի նման հզոր պետությունը, ասպատակել ու կոտորել հարևանությամբ ապրող այլադավաններին, սեփական պետությունն ունենալու հնարավորությունից զրկել բազմամիլիոն մահմեդական քրդերին... Աշխարհաբաղաբանական այդ բարդ պայմաններում հայ ժողովուրդը ոչ միայն կարողացել է թեկուզ ծվատված հայրենիքով՝ երկու հայկական պետություն ստեղծել, այլև տարածաշրջանում դարձել է կարևոր գործոն:

Ցավոք, մեր բազմադարյա պատմության մեջ իրենց սև գործոն են արել նաև դավաճանները, սակայն հայի ազնիվ կենսարժանքը մնացել է անփոփոխ, որը դու ես, ես եմ, նա է՝ Արցախ-Հայաստան-Սփյուռք եռամիասնությամբ:

Կրկին հաղթական երգեր ենք երգելու ու պանծալու մեր ազատագրված հայրենիքում: Հավատանք:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՐՑԱՒԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄՆԵՐԻՆ



Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը հունվարի 20-ին ընդունել է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի անդամներին:

տակրթական ոլորտի զարգացման առաջնահերթություններին ու հեռանկարներին առնչվող հարցեր:

Երկրի ղեկավարը նշել է, որ ներկայիս դժվարին շրջանում չափազանց կարևոր է Արցախի պետական համալսարանի՝ որպես մեր երկրի ուսումնական հանգուցային հաստատության, դերակատարությունը կրթության որակի բարձրացման, արհեստավարժ կադրերի պատրաստման և երիտասարդ սերնդի դաստիարակման գործում, և պետությունը ջանքեր չի խնայելու մայր բուհի ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին աջակցելու հարցում: Նախագահ Հարությունյանի խոսքով՝ 2020-2021 ուսումնական տարվա համար

Արցախի պետական համալսարանի հեռակա բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող ուսանողները կազմավորեն ուսման վարձ վճարելու բեռից, իսկ վարձավճարները կփոխատուցի Արցախի Հանրապետության կառավարությունը:

Արցախի պետական համալսարանի ղեկավար Արմեն Սարգսյանը պրոֆեսորադասախոսական կազմի անունից շնորհակալություն է հայտնել նախագահին անմիջական մթնոլորտում կայացած հանդիպման համար՝ խոստանալով առաջիկա ժամանակահատվածում ներկայացնել բուհի ուսումնական գործընթացի բարելավմանն ու զարգացմանն ուղղված բարեփոխումների մոր ծրագիր:

ՇՈՒՇԻ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՊՐՈՋԸ ԳՈՐԾՈՒՄ Է



Վայրերը կորցրած բնակիչների համար, մեծ չափով պայմանավորված է նրանով, թե որքանով են լուծվում գոյության համար անհրաժեշտ խնդիրները, որոնց մեջ կարևոր է երեխաների կրթության հարցը: Այդ իսկ պատճառով պետության կողմից առաջնահերթ կազմակերպվում է ուսումնական հաստատությունների գործարկումը: Ինչպես հայտնի է, պատերազմի ավարտից հետո Ստեփանակերտում առաջինն իր դռներն է բացել Աշոտ Դուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցը, որտեղ կարող էին սովորել ոչ միայն մարաթադաքի դպրոցների, այլև շրջանների երեխաները: Աստիճանաբար, թշնամու ռմբակոծության հետևանքով մյուս կրթօջախներում ավերածությունների վերացմանը զուգընթաց, երեխաները սկսեցին հաճախել իրենց դպրոցները: Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած բնակավայրերի երեխաները, որոնք իրենց ընտանիքների հետ արդեն վերադարձել են Արցախ, շարունակում են հաճախել տարբեր դպրոցներ: Դեռևս նույնը ամսին մեր թերթին տված հարցազրույցի ժամանակ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանն ասել էր, որ հակված են նրան, որ Շուշիի ուսումնական հաստատությունների, ինչպես նաև Հաղորթի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի անունները միշտ հնչեն: Իհարկե, դա կախված է նաև նրանից, թե այդ գործում ինչ շահագրգռություն կդրսևորեն տվյալ հաստատությունների ղեկավարներն իրենց կոլեկտիվներով հանդերձ:

Յվ ահա, հունվարի 11-ից Շուշիի Խ.Արովյանի անվան միջնակարգ

Հրադադար հայտարարվելուց հետո ռուս խաղաղապահների կողմից անվտանգության ապահովման երաշխավորությամբ Արցախ վերադառնալու հատկապես իրենց բնակարանները, որոնք արդեն վերադարձել են միայն մարաթադաքի դպրոցների, այլև շրջանների երեխաները: Աստիճանաբար, թշնամու ռմբակոծության հետևանքով մյուս կրթօջախներում ավերածությունների վերացմանը զուգընթաց, երեխաները սկսեցին հաճախել իրենց դպրոցները: Ադրբեջանի վերահսկողության տակ մնացած բնակավայրերի երեխաները, որոնք իրենց ընտանիքների հետ արդեն վերադարձել են Արցախ, շարունակում են հաճախել տարբեր դպրոցներ: Դեռևս նույնը ամսին մեր թերթին տված հարցազրույցի ժամանակ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանն ասել էր, որ հակված են նրան, որ Շուշիի ուսումնական հաստատությունների, ինչպես նաև Հաղորթի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի անունները միշտ հնչեն: Իհարկե, դա կախված է նաև նրանից, թե այդ գործում ինչ շահագրգռություն կդրսևորեն տվյալ հաստատությունների ղեկավարներն իրենց կոլեկտիվներով հանդերձ:

ԱՄԵՆ ԱՇՎԿԵՐՏ ԻՐ ՈՒՍՈՒՑՉԻՆ Է ՈՒՋՈՒՄ

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանին, որն ընդառաջեց Շուշիի կրթության բաժնի վարիչի և իմ խնդրանքին՝ վերաբացելու մեր դպրոցը, մեր գոյույցը շնորհակալական նախաբանով սկսեց Շուշիի Խ. Արովյանի անվան դպրոցի տնօրեն Լիանա Հարությունյանը: Նախարարն ասել էր. «Շատ

դպրոցն արդեն գործում է: Այն տեղակայված է Ստեփանակերտի հ. 2 դպրոցի շենքում:

գնում), լացում էր, չնայած հյուրանոցից (որտեղ ապաստանել էինք) դպրոց մի քանի մետր էր: Հարցնում էի՝ Մարի, դու չե՞ս ուզում դպրոց գնալ, գիտե՞լիք ստանալ, խելացի աղջիկ դառնալ: Դու ուզում ես որ մեծանաս՝ ոչ մի բանի մասնագետ չլինե՞ս: Նա պատասխանում էր՝ ես չեմ ուզում այստեղ դպրոց գնալ, ես ուզում եմ մեր ընկեր Դարուշյանին, մեր ընկեր Ջաբարյանին, մեր Լիանա Վալերևանյանին, ես իմ ընկերներին եմ ուզում: Չնայած այն դպրոցում բոլորը իրենից շատ գոհ էին ու սիրում էին նրան և առհասարակ՝ դարաբաղաբաններին: Մենք միշտ դժգոհ ենք եղել մեր աշակերտներից: Բայց ես կռվի օրերին մեր աշակերտները որ դպրոց գնացել են, փայլել են: Ջերմուկում ուսուցիչներն ասում էին՝ ես դարաբաղաբանները շատ խելացի են: Ես շատ ուրախանում էի:



Հիմա որ տեսնեք աղջիկս ինչ ոգևորությամբ է գնում այստեղ մեր դպրոցը, կապ չունի, որ իր հարազատ դպրոցաշենքը չէ, ասում է՝ բայց մեր ուսուցիչներն են այստեղ, մեր ընկերները: Ինձ էլ հորդորում է՝ ընկեր Ջաբարյանին էլ զանգ տուր, ասա՝ շուտ եկ, մեր դպրոցում սկսել ենք դասերը: Թե ինչքան ուրախ է, չեմ կարող ասել:

Ինձ հասկանալի է դստերս ուրախությունը: Իմ մանկությունն են հիշում: Երբ Բաքվից տեղափոխվեցինք, սկզբում Ստեփանակերտում էինք ապրում՝ Արմենավան թաղամասում: Ընդունվել էի 8-րդ դպրոց: Բայց հետո երբ լսեցի, որ բացվում է փախստականների համար դպրոց, մեծ հաճույքով պատրաստվեցի այդ դպրոցը գնալ: Ինձ համոզում էին, որ փախստականների դպրոցը հեռու է (այժմյան 1-ին դպրոցի տեղում էր և կոչվում էր 11-րդ դպրոց), տրանսպորտ չկա, այդքան ճանապարհը ոտքով պետք է կտրեի: Բայց այնտեղ թեկուզ իմ համադասարանցիները և ուսուցիչները չէին, գերադասեցի չնայած այդքան հեռու, բայցայդ դպրոցը գնալ: Գիտե՞ք ինչու: Քանի որ փախստականների դպրոց էր, մի քիչ հարազատական բան կար, բոլորն իմ կարգավիճակով էին: Եվ աղջկաս պես ոգևորությամբ էի հաճախում:

Կոնկրետ իմ երեխաների օրինակով ավկայեմ, որ դա, իրոք, այդպես է: Պատերազմի օրերին մեր ընտանիքը ապաստանել էր Ջերմուկում: Մեզ շատ լավ հյուրընկալել են այնտեղ, դրանում ոչ մի խոսք չկա, բայց աղջիկս, որ չորրորդ դասարանում է սովորում, դպրոց գնալու օրը երբ գալիս էր (օրումեջ էին

ԿԱՆՉ

ՇՈՒՇԻ Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՊՐՈՑՑ ԳՈՐԾՈՒՄ Է

1 ՄԻԱՄԻՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԴԵՏ ՅԱՂՈՎՅԱՐՆԵԼԻ ԵՆ

- Հունվարի 15-ի դրությամբ 184 աշակերտ է հաճախում դպրոց: Շուշիում 620 աշակերտ ունեինք: Եթե բնակարանով ապահովման հարցը լուծված լինի, Հայաստանից ավելի շատ ընտանիքներ կտեղափոխվեն: Մյուս կողմից էլ խնդիր է այն, որ դպրոցը, որը մինչև պատերազմը միջնակարգ հոսքային էր և ուներ բնագիտական ու հումանիտար հոսքեր, այժմ այդպիսին չէ, և բարձր դասարանների աշակերտների մի մասը Ստեփանակերտում ստիպված հաճախում է հոսքեր ունեցող դպրոցներ: Պատճառներից մեկն էլ այն է, որ երեխաները երկրորդ հերթ են հաճախում, և ծնողներից ոմանց հարմար չէ այդ ռեժիմը՝ կապված իրենց աշխատանքի հետ: Այսպես թե այնպես, Շուշիի դպրոցը գործում է, և մենք շատ ուրախ ենք: Դեռ սկիզբն է, և համոզված ենք, որ ժամանակի ընթացքում ավելի մեծ համալրում կունենանք: Ես նկատում եմ, որ փոխվել է երեխաների տրամադրությունը, նրանք ուրախությամբ են հաճախում՝ ամեն օր վայելելով իրենց ուսուցիչների ու դասընկերների հետ շփման ուրախությունը: Ուսուցիչներն էլ են գոտեպնդվել, կամաց-կամաց շտկում են իրենց մեջքը: Ճիշտ է, կտրված ենք, հայրենիք ենք կորցրել, տուն ու տեղ թողել, բայց որ միասին ենք, կարծես նորից ոգի առած լինենք: Ինձ Ջերմուկում աշխատանք էին առաջարկել, բայց մտածել եմ, որ անպայման պետք է վերադառնամ հայրենիք, հավաքեմ իմ ցիրուցան կուլեկտիվին, աշակերտներին, ձեռք ձեռքի տված կրթենք ու դաստիարակենք արժանի սերունդ մեր երկրի համար: Մենք պարտավոր ենք դա անել: Ուսումնական գործընթացը միաժամանակ բարերար ազդեցություն է թողնում թե՛ աշակերտների և թե՛ ուսուցիչների ու մյուս աշխատողների առողջության վրա. նրանք սատիճանաբար դուրս են գալիս ընկճված վիճակից: Մեր կուլեկտիվը սիրով է լծվել իր գործին, կասե՛ի՝ ավելի պատասխանատվությամբ է վերաբերվում իր առաքելությանը: Համոզված եմ՝ կկարողանանք հաղթահարել դժվարությունները, քանի որ միասին ենք:

չուհին գերադասեց շարունակել նույն տեղից և առաջ անցնել. թեման հոգեհարազատ է բոլորին: Երեխաները հիմնականում ապահովված են դասագրքերով. որ դպրոցում սովորել են, տրամադրել են, միայն մեկ-երկու հոգի չունեն, նրանք էլ դասագրքից նկարում են և այդպես սովորում, բայց ուսուցիչները հույս ունեն, որ մի տեղից ձեռք կբերեն:

5-րդ դասարանում մայրենիից թելադրություն էր: Ուսուցչուհի Անգելինա Խաչատրյանից, որը նաև դասղեկն է, մի քանի րոպե խլեցինք երեխաների տրամադրությունը շոշափելու նպատակով: Դարձյալ նույն կարծիքն էր: «Ուրախ ենք, որ միասին ենք, հիմա ավելի լավ պիտի սովորենք, որ հարցանց գրանցվում են, բայց ստանալու համար պետք է փողոցում երկար հերթ կանգնեն: Էլ չենք խոսում նյութական մյուս օգնությունների մասին: Եվ այստեղ միտք ծագեց. իսկ հնարավոր չէ՞, որ համապատասխան մարմինների աշխատողները, օրինակ, ուսուցիչների ընտանիքների հասանելիքը, եթե հասցեական դժվարանում են, գոնե աշխատավայր բերեն, որտեղ նրանք կենտրոնացված են: Այդ ձևով ուսուցիչները ժամանակ չեն վատնի հերթերի վրա, և գուտ մարդկայնորեն էլ իրենց արժանապատիվ կզգան: Մեր գրույցի ժամանակ ուսուցչանոց մտավ հ. 2 դպրոցի փոխտնօրեն Կարինե Աբրահամյանը, որը հարցրեց, թե ինչի կարիք ունեն նրանք:



ՄՊԱՍՈՒՄ

Ազգային ողբերգություն ապրելուց զատ կուլեկտիվն իր անհատական ցավն էլ ունի. դպրոցի զինղեկ Գարեգին Հարությունյանը, որը պատերազմի առաջին իսկ օրից զինվորագրվել է հայրենիքի պաշտպանությանը, հոկտեմբերի 10-ից անհետ կորած է համարվում: Սիրելի զինղեկի, լավ մանկավարժի, ամեն ինչում հարեհաս մարդու բացակայությունը տխրության քողով է պատել կուլեկտիվին, մանավանդ որ նրա հայրն էլ՝ Վլադիմիր Հարությունյանը, այդ կուլեկտիվի

րենք, որ գիտությամբ հաղթենք: Մեզինք էլ կախված մեր երկրի ապագան», - մեծավարի իրենց անելիքները ներկայացրեց աշակերտներից մեկը:

10-րդ դասարանում հանրահաշվի դաս էր: Մեզ ուղեկցում էր նաև դասղեկը՝ ֆիզղեկ Գեմադի Դանիելյանը: Դպրոցում գրեթե բոլոր ուսուցիչները դասղեկական դասարան ունեն և դպրոց են գալիս դասերն սկսվելուց առաջ ու մնում մինչև ավարտը: Ասել է թե՛ ուսուցիչներն իրենց աշակերտների հետ են դասերին թե դասամիջոցներին: Եվ նրանց փոխադարձ կապվածությունը նաև դրանով է պայմանավորված:



անդամ է, պատմության ուսուցիչ: Վիշոր թաքցրած՝ նա ամեն օր մատյանն առած՝ դասարան է մտնում և շարունակում աշակերտներին մատուցել հայոց պատմության էջերը, որոնք, պակաղ, ժամանակ առ ժամանակ, սևով են պատվել ինչպես հիմա: Տնօրենն ասաց, որ ամբողջ կուլեկտիվով ամեն օր աղոթում են անհետ կորած իրենց գործընկերոջ վերադարձի համար:

Աշխարհագրության մասնագետ Լուսինե Պետրոսյանի ամուսինն էլ ծանր վիրավորված է, որն այժմ ապաքինվում է Երևանում: Լ. Հարությունյանն ասաց, որ ժամանակավոր մասնագետ են վերցրել և սիրով սպասում են իրենց ուսուցչուհու վերադարձին:

Դպրոցի ուսուցիչներից կան, որ դեռ Հայաստանում են: Կուլեկտիվը սպասում է մաթեմատիկայի ուսուցիչ Մերուժան Սարգսյանին, նրա կնոջը՝ փոխտնօրեն, հայոց լեզվի և գրականության մասնագետ Լիդա Մկրտչյանին (երկուսն էլ թղթակցում էին «Լուսարար»-ին): Պատճառը, ինչպես վերն ասացինք, բնակարանային խնդիրն է: Բայց տնօրենն ասաց՝ ոչինչ, թող գան, մի հնար կգտնենք: Հիշեցինք Շուշիի հայոց հայրիկ, երջանակահիշատակ Արսեն Խաչատրյանի կյանքը: Կրթության այդ մեծ երախտավոր՝ Շուշիի մանկավարժական ուսումնարանի տնօրենի ընտանիքն անցյալ դարի 30-40-ականներին այն սուղ տարիներից ապրում էր հենց կրթօջախում: Չենք ասում՝ նույնը կրկնել, բայց ցանկության դեպքում ամեն ինչ հնարավոր է:

Հետաքրքիր բազմաթիվ միջոցառումների հեղինակ՝ նախադպրոցական խմբի

ուսուցիչ Նարինե Գրիգորյանին նույնպես չտեսանք: «Մեր ուրազանը», ինչպես բնորոշեց տնօրենը, ասել էր՝ պատրաստվեք, գալիս եմ:

Միջանցքում հանդիպեցինք դասարանից դուրս եկող մեր ակտիվ թղթակից Վարդիթեր Հակոբյանին: Ուրեմն, շատ չի ուշանա, առաջիկայում «Լուսարար»-ում կհանդիպենք Շուշիի Խ. Արովյանի անվան դպրոցի առօրյայի մասին նրա հեղինակությամբ հետաքրքիր նոր հոդվածներին:

Դպրոցն, անշուշտ, իր սաներին էլ է սպասում:

Ֆիզիկայի ուսուցիչ Արգենտինա Պողոսյանը ներկայացրեց իր փոքրիկ թոռան պատմածը: Երբ Երևանի իր ուսուցչուհուն ասել էր, որ վերադառնում է Արցախ, իրենց դպրոցը բացվել է, չգիտես նրանից, որ աշակերտը թողնում է իրենց, թե «Շուշի» բառից, ուսուցչուհին լացակույմ էլ էր՝ ասելով. «Չենք ուզում, որ մեզինք բաժանվեն, բայց որ Շուշիի դպրոցը բացվել է, լավ ես անում, գնա»:

Ինչպես Մեծն թունամյանն է ասել՝ ուսումնարանը շենքը չէ, այլ ուսուցիչներն ու աշակերտները:

Ուրեմն, Շուշիի Խ. Արովյանի անվան դպրոցը կենդանի է:

Ի ԴՅՈՒՄ ԵՎ ԿԱՍՏԱԳՐԻ ՀԵԳՆԱՆՔԻ

Ճակատագիրն իր չար խաղն է անում: Երեսուն տարի առաջ էլ Շուշին հայաթափվեց, և Խ. Արովյանի անվան դպրոցը Ստեփանակերտում դարձյալ վերակազմակերպվեց կրթօջախի նախանձախնդիր ղեկավարության ու կրթության այն ժամանակվա պատասխանատուների շնորհիվ, պահեց իր գոյությունը՝ շարունակելով գործունեությունն ազատագրված Շուշիում:

Դպրոցի ներկայիս տնօրեն Լիանա Հարությունյանն էլ ապրել է այդ ամբողջ գողգոթան և վերհիշում է.

- Երբ Բաքվից բռնագաղթեցինք, մայրիկս առաջարկեց Ռուսաստան գնալ, քանի որ իր ամբողջ բարեկամությունն այնտեղ է: Բայց հայրիկս ասաց՝ ոչ մի դեպքում, պիտի վերադառնանք իմ հայրենիքը, ու այդպես էլ արեցինք: Սկզբում ապրում էինք Ստեփանակերտում, հետո տեղափոխվեցինք հորս ծննդավայր՝ Քուլատակ գյուղ: Իսկ երբ Շուշին ազատագրվեց, հաստատվեցինք այնտեղ: Հաճախում էի Խ.Արովյանի անվան դպրոցը, նրա առաջին շրջանավարտներից եմ: Ընդունվեցի ԱրՊՀ և որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի աշխատանքի անցա մեր դպրոցում: 21 տարի աշխատել եմ այդտեղ, վերջին վեց տարին՝ տնօրենի պաշտոնում: Ենդրիակալ եմ իմ կուլեկտիվին, որն ինձ վստահեց այդ պաշտոնը և մանավանդ նախկին տնօրեն Նազիկ Նալբանդյանին, որն իր մեծ փորձառությունը փոխանցեց ինձ:

Ճակատագիրն անընդհատ փորձությունների է ենթարկում մեզ: Նորից հայտնվել ենք նույն իրավիճակում: Թուրքը երբեք իր ձեռագիրը չի փոխի: Բայց Աստված մեծ է, երկի թե մի լույս կբացվի մեզ և ընդհանրապես ողջ հայ ժողովրդի համար: Բայց այդ լույսը ինքն իրեն չի բացվի, այլ մեր օգնությամբ: Մտածում էինք, որ եթե չկա Շուշին, ինչու վերադառնանք, բայց անմիջապես էլ մենք մեզ հակադարձում ենք. իսկ եթե չվերադառնանք, Արցախը լրիվ կհայաթափվի, որն էլ հենց թուրքի ուզածն է: Բոլորիս պարտքն է ապրել մեր հայրենիքում: Այսօր մեր պայքարի ձևն այդ է: Ապրել այստեղ և շարունակել կյանքը: Մեր հույսը չենք կորցնում, որ մի օր հարազատ դպրոցի զանգը դարձյալ հնչեցնելու ենք Շուշիում: Դրա համար պետք է աշխատենք, ստեղծենք, արարենք: Այսօր բոլորս ենք դիրքապահ, ամեն մեկս մեր տեղում պետք է ամուր կանգնենք, որ երկիրը պահենք:

ՍԿԵՂԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տնօրենի ուղեկցությամբ շրջում ենք դասարաններով: 2-րդ դասարանում միացյալ դաս էին անում դասվարներ Գոհար Սարգսյանը և Անահիտ Արզումանյանը: Փոքրիկ Լեոն արտահայտվեց ամբողջ դասարանի անունից. «Շատ ուրախ ենք, որ նորից միասին ենք սովորում»: Մայրենիի դաս էր, թեման՝ «Խաղաղության աղավաղում»: Խորհրդանշական էր, որ պատերազմից առաջ այդտեղ էին մնացել, և չնայած երեխաները տարբեր դպրոցներում ուրիշ թեմաների էին անցել, ուսուց-



Նախկին 23 հոգանոց դասարանից այստեղ հաճախում է ինը աշակերտ (երկու հոգի բացակա էր): Դասղեկն ամբողջ դասարանի հետ կապ է պահում: Ասաց, որ նրանցից հինգն են մնացել Երևանում, մյուսները Ստեփանակերտում են և սովորում են հոսքեր ունեցող դպրոցներում: Երեխաների խոհուն հայացքը խոսում էր նրանց վերապրածի մասին: Մեր հարցումին Դավիթ Խաչատրյանը պատասխանեց, որ մտադիր է ինժեների մասնագիտությունն ընտրել, քանի որ պատերազմող երկրում դա շատ անհրաժեշտ է:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԷԼ ՊԵՏՔ Է ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԶԵՎՈՎ ԼԻՆԻ

Ուսուցչանոցում գրուցում ենք ուսուցիչների հետ: Հետաքրքրվեցի՝ կարողանում են ժամանակին ստանալ պետության կողմից տրվող աջակցությունը: Անհարմար զգալով պատմեցին, որ գունարի

ՈՒՐԱՆ ԵՆՔ, ՈՐ ՄԻԱՄԻՆ ԵՆՔ

Տնօրենի ուղեկցությամբ շրջում ենք դասարաններով: 2-րդ դասարանում միացյալ դաս էին անում դասվարներ Գոհար Սարգսյանը և Անահիտ Արզումանյանը: Փոքրիկ Լեոն արտահայտվեց ամբողջ դասարանի անունից. «Շատ ուրախ ենք, որ նորից միասին ենք սովորում»: Մայրենիի դաս էր, թեման՝ «Խաղաղության աղավաղում»: Խորհրդանշական էր, որ պատերազմից առաջ այդտեղ էին մնացել, և չնայած երեխաները տարբեր դպրոցներում ուրիշ թեմաների էին անցել, ուսուց-

ՀՈՒՇ ԵՎ ՀՈՒՅՍ

ԿՈՐՈՒՄՅԱԼ ԴՐԱՒՏ

Առանց հավատի կյանքում դյուրին չէ նույնիսկ մեռնելը, Իսկ ապրելն... արդեն անկարելի է:

Պ. Սևակ



Ամառը շուտ անցավ: Երեք ամիսը երեք ակնթարթի պես թռավ, ու այդպես էլ չհասցրի մեկնել այնտեղ: Մարդն այդպիսին է՝ միշտ չարածին արդարացում կգտնի: Բայց երբ հայտնվում է ավստասանքը, ինքնարդարացումն էլ չի օգնում: Հոգիդ խաղաղեցնելու համար սկսում են մեղավորներ փնտրել: Ես էլ գտա մեղավորին՝ ի դեմս նրա, ում պիտի հյուրընկալվեի: Մշտազբաղ էր, հազար ու մի հոգս ու գործ ուներ թե՛ տանը, թե՛ աշխատավայրում: Այդքանն էլ հերիք չէր, վարկ վերցրել ու տունն էր կցակառուցում: Մարդն ամուր էր կպել հողին: Ուզում էր տուն ու տեղը շենացնել, անասուն ու այգի պահել, նույնիսկ երկրորդ մասնագիտություն էր ձեռք բերել (հետո ինչ, թե մայրաքաղաքից հեռու լինելն էլ ավելի էր բարդացնում 40-ից հետո կրկին ուսանող դարձածի առջև ծառայած խնդիրները):



Այդ ուզածն էլ մեծ բան չէր: Մարդը պարզապես մարդավարի ապրել էր ուզում: Ու վրա հասավ սեպտեմբերը: Անկատար մնացին երազանքները: Անկատար մնաց նաև իմ այցը Հաղորդի շրջանի Դրախտիկ գյուղ: Մտադիր էի գնալ ու գրել այդ գյուղի մասին: Շատ էի ուզում գրուցել հատկապես մանկապարտեզի սաների ու աշխատողների հետ: Դրսից աչք շոյող ճարտարապետությամբ շինությունը վաղուց էր շարժել հետաքրքրասիրությունս: Արդյո՞ք ներսում մանուկների կյանքը նույնքան գրավիչ էր ու ներդաշնակ ներքին ու արտաքին հարդարմանը: Հարցազրույց վարելու խնդրանքս մանկապարտեզի տնօրենի կողմից չէր մերժվել, սակայն ամեն անգամ ծագում էր որևէ խոչընդոտ՝ կապված մանկապարտեզի վարչատնտեսական խնդիրների կամ սեփական տնտեսության հետ: Սեպտեմբերը գլխավայր շուռ տվեց ամեն ինչ: Չկայացած հարցազրույցի երկու գրուցակիցներով հայտնվեցինք երևանյան կացարաններից մեկում կողք կողքի՝ փախստականի կարգավիճակով: «Դե հիմա սրտիդ ուզածի չափ կարող ես հարցազրույց վերցնել», - ասաց թույրս, նույն ինքը՝ «Դրախտիկի պետական մանկապարտեզ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմինե Սեժույանյանը: Բայց սիրտս էլ չէր ուզում: Ոչինչ էլ չէին ուզում ո՛չ մեր, ո՛չ մյուս բոլոր արցախցիների սրտերը: Նրանց միակ փափագը խաղաղությունն էր ու տունդարձը: Նույն սենյակում երկու ամսվա մեր կյանքն ու հոգեվիճակը, թերևս, ավել

լորդ է նկարագրել: Հարկադրաբար իր տունը լքած ցանկացած արցախցու ծանոթ են այդ հոգեմաշ ապրումները: Կարոտը, ցավը, սարսափն ու անորոշությունը ժամ առ ժամ օղակում էին մեր եղած-չեղած խիզախությունը: Ծնկի գալու իրավունքն էլ ինքներս մեզնից խլել էինք: Ծնկաչոք կարելի էր միայն աղոթել: Հույսը մոմի լույսով առկայծում էր մեր աղոթքներում, ու նորից ոտքի էինք կանգնում: Անգամ այն ժամանակ, երբ Հաղորդի մյուս գյուղերի հետ ընկավ նաև 400-ից քիչ ավելի բնակիչ ունեցող Դրախտիկը, քույրս չհուսալքվեց: Դրախտիկը դուրս էր հայկական կողմի վերահսկողությունից, բայց իր հոգու վերահսկողությունից այն ոչ ոք ի գործ չէր հանել: Ինքն ու Դրախտիկն իրար կապված էին հազար ու մի թելով, ու այդ թելերը բռնակալի շղթաներից շատ ավելի ամուր էին:

1998 թվականից էր նա ապրում Դրախտիկում: Հանգամանքների բերումով մի առժամանակ ստիպված էր արտերկիր

լծվում աշխատանքի: Մեր մանուկները վերջապես նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորություն ունեին: Նույնիսկ հարակից գյուղերից ունեինք սանիկներ: Ոչ մի վայրկյան չէինք մոռանում, որ ապագա աշակերտ ենք կրթում: Իսկ դա վեհ առաքելություն էր: 2020թ. գարնանը արևելքից մեզ հասած COVID կոչվածը ինչպես ամենուր, այնպես էլ մեզ մոտ խափանեց բոլոր պլանները: Ահավոր նյարդայնանում էինք հեռավար եղանակով չոր ու անփայլ պարապմունքներ վարելուց: Հիմա են հասկանում, որ դա չարյաց փոքրագույնն էր», - ասում է Արմինեն, և գրույցի սկզբում ցերմ հուշերից շողացող աչքերը մեկնեն ծածկվում են տխրության շղարշով: Հուզմունքից կերկերող ծայրով նա շարունակում է. «Նոր ուսումնականը սկսեցինք նոր պլաններով: Պատրաստվում էինք աշխատանքի բերքի հանդեսին, որին պիտի հրավիրեինք նաև կրթության շրջանային բաժնի ներկայացուցիչներին՝ բաժնի վարիչ պարոն Ա. Մինասյանի գլխավորությամբ: Ով իմանար, որ շաբաթն ուրբաթից շուտ կգա»:

Հիշողությունները տնօրենին տանում են դեպի իր սիրելի մանկապարտեզ: Գործվանքով պատմում է սանիկների և գործընկերների մասին: Հետո սթափվում և վերադառնում է դաժան իրականության: Չսպում է կոկորդիս խեղդող լացը, սրբուն գլորվելու պատրաստ արցունքները ու հուշերի ոսկյա շղթայով նորից ու նորից ճախրում դեպի գյուղ: Դրախտիկում արևածագն ուրիշ էր, ուրիշ էին երդիկներից ելնող ծխի քուլաներով պարուրված առավոտները, ուրիշ էին օդն ու ջուրը: Մանկապարտեզում աշխատանքային օրը խելահեղ պտույտով էր սկսվում: Մանուկներին մուտքի մոտ ընդունելուց մինչև երեկոյան 17.00-ին նրանց տուն ճանապարհելու պահը հազիվ էին թողնում գողանում

ները, ուրիշ էին օդն ու ջուրը: Մանկապարտեզում աշխատանքային օրը խելահեղ պտույտով էր սկսվում: Մանուկներին մուտքի մոտ ընդունելուց մինչև երեկոյան 17.00-ին նրանց տուն ճանապարհելու պահը հազիվ էին թողնում գողանում



հերթով մի բաժակ սուրճ խմելու և շունչ առնելու համար: Հոգնածությունից երբեմն ուղղակի փլվում էին աթոռին, բայց մանուկների աշխարհում դժգոհությունն ու դժկամությունը տեղ չունեն: Փորձիր միայն չերգել ու չպարել նրանց հետ, փորձիր չպատասխանել Ինչուիկների գլխում տիեզերական արագությամբ իրար հաջորդող ու տրամաբանական պատասխան չունեցող հարցերին, փորձիր թոթով լեզվով մեծավարի խոսող մարդուկին ասել, որ դու հոգնել ես: Համարձակությունդ հերիքում է, փորձիր թեկուզ չժպտալ: Հասա միայն փորձիր: Արմինեն ու իր կուլեկտիվը միտք էլ չունեին փորձելու: Նրանք իրենց բառա-

պաշարից հանել էին դժ- ու չ-ով սկսվող բառերն ու մանկան պես հրճվում էին սանիկների ամեն մի հաջողությամբ, ձեռք բերած ինքնուրույնությամբ ու գիտելիքով, նույնիսկ լրիվությամբ կերած ճաշով (չնայած խոհարար Լուսինեի ճաշերի համի ու բույրի գայթակղությանը նույնիսկ մեծերը չէին կարողանում դիմադրել): Սարսափելի է գիտակցել, որ այդ ամենն արդեն անցյալում է: Նախկին կյանքի բազում սքանչելի ակնթարթներից իրենց մնացել են լոկ երազ թվացող հուշերն ու սոցկայքերում դրված լուսանկարները: Բայց թշնամին դարանակալել է նույնիսկ համացանցում՝ այստեղ էլ կիրառելով հոգեբանական ճնշման գեներ: Անասելի ցավոտ է լուսանկարներում ու տեսանյութերում տեսնել մանկապարտեզի ավեր շենքը, թո սանիկների գույնզգույն սեղանիկների շուրջ հաղթական բազմած ասկյարներին, որոնք մեկ այլ տեսանյութում տանտիրոջ իրավունքով խրախճանքի սեղան էին բացել թո իսկ տանը, անարգում էին թո սրբությունները, քայլում այն փողոցներով, որոնցով ընդամենը մեկ ամիս առաջ դու էիր քայլում դեպի թո երազանքները:

Այսպիսին չէի պատկերացնում եղեմական անվանումով գյուղի մասին իմ նյութը: Դրախտիկն Արցախի այն հատուկներն էր, որը համեմատաբար հարթ ռելիեֆ ունի ու ծվարած չէ ժայռերում: Մտածում էի՝ ամառային չստացված այցս տեղափոխել աշնան կեսերն ու վայելել Հաղորդի գունեղ աշունը: Մի ողջ օր կքայլեի գյուղական փողոցներով, կմտնեի տանձի ու խնձորի այգիները, կգրուցեի պարզ ու անմիջական դրախտիկցիների հետ, համայնքի ղեկավարից կտեղեկանայի գյուղի զարգացման ծրագրերի մասին: Հետո, այդ ամենից տպավորված, գրիչը ձեռքս կառնեի ու դրախտային Դրախտիկի գովքը կերգեի: Իսկ աշունն անցավ մղձավանջի մեջ: Նա կորցրել էր իր ներկայանակը ու սևով էր ներկել դաշտ ու անտառ: Հերթական անգամ աստղերի պես ցիրուցան արեցին հայերին: Քույրս առաջիններից էր, որ վերադարձավ քաղաքամայր Ստեփանակերտ: Ասում է, որ այդպես նա իրեն ավելի մոտ է զգում Դրախտիկին: Ավելի հաճախ խոսում է մանկապարտեզի, քան սեփական օջախի մասին: Հավատում է, որ մի օր դարձյալ ալ արևածագը կբացվի Դրախտիկում, և այլևս ստիպված չի լինի պատասխան փնտրել ինձանայ դատեր «Պա հիբը՞նք քիման մեր շենք» հարցին: Հավատում է, որ գյուղից հարյուրավոր կիլոմետրեր հեռու ծնված մանուկները մի օր կգան Դրախտիկի մանկապարտեզ, ու կսկսվի սովորական եռուզեռը: Խոհանոցից եկող աման-չամանների բարձր զնգոցները կխառնվեն երաժշտության դասատուի գրնգուն երգին, խաղասենյակից կլսվի ավտոյի համար կռվող տղաների գոռոցն ու ընդամենը թուրքերի առաջ իրենից բաժանված մայրիկի կարոտից սրտակեղեք լացող աղջնակի ծայրը: Այդ աղմուկս սիմֆոնիայից գծված՝ ինքը ներսից կփակի կաբինետի դուռը, գլուխը կթաղի գրասեղանին թափված փաստաթղթերի մեջ ու սրտնեղած կասի. «Յանի էսքան թղթաբանություն կընի՞»: Իսկ երեկոյան բացարձակ լռության մեջ կկողպի արդեն դատարկված շենքի դուռն ու քայլերը կուղղի դեպի տուն՝ ուժասպառ, բայց երջանիկ:

Մեդինա ՄեժԼՈՒՄՅԱՆ
Խնամապահի միջև. դպրոցի ռուսաց
լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՊԱՐՏԵ ՈՒ ՊԱՐԱՆՋ

ԵԿԵՔ ԶՄՈՒԱՆՆԵՔ ՄԵՐ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԸ

Օրերս Ստեփանակերտի թունամանյան փողոցում պատահամաբ հանդիպեցի իմ նախկին աշակերտ, Կրկժամի ազատագրման ակտիվ մասնակից Արմեն Աբաղյանին, որն իմ խնդրանքով մանրամասնորեն պատմեց իր և ընկերների կողմից կատարված մարտական գործողությունների մասին և ավստասանքով նշեց, որ այսօր այն ժամանակվա մեր ազատամարտիկները գլխիկոր են քայլում: Հիշում եմ, աշակերտիս հրավերով մասնակցել եմ Կրկժամի ազատագրման 25-ամյակին նվիրված տոնակատարությանը, որը նշվում էր 2008-ից ի վեր Կրկժամ համայնքի և Ազատամարտիկների միության կողմից՝ քաղաքային և հանրապետական պաշտոնատար այրերի մասնակցությամբ: Անչափ ուրախ էի, որ Ստեփանակերտի քաղաքապետարանի կողմից այստեղ տեղադրվել է հուշարձան կոթող-խաչքար՝ որպես հարգանքի տուրք գոհվածների հիշատակին: Արհամարհելով հունվարյան ցրտաշունչ քամին և սառնամանիքը՝ հավաքվել էին բոլոր հրավիրվածները, որոնք ծափահարություններով դիմավորեցին և զորամասից եկած տոնական համազգեստով հպարտ զինվորներին ու սպաներին: Տոնական միջոցառմանը մասնակցում էր նաև վարչապետը՝ այսօրվա ԼՂՀ նախագահը, որն իր մարտական մկրտությունն ստացել է հենց այդ բնակավայրի ազատագրման մարտերում: Արայիկ Զարուբյանյանը, իշխանությունների անունից ծաղկեպսակ դնելով հուշակոթողին, գլուխ խոնարհեց, իսկ նախկին ազատամարտիկները բազմազույն մեխակներ խոնարհեցին իրենց նահատակ ընկերների հիշատակին: Մրտառուչ էին ելույթները, իսկ ինձ համար՝ ավելի, քան որ խոսում էին իմ նախկին աշակերտները: Եվ այսօր հանդիպելով նրանց՝ մեծ հետաքրքրությամբ հարցրի, թե այս տարի նշվելու է և Կրկժամի ազատագրման օրը: Նախկին աշակերտս՝ Սարգիս Գալստյանը, որ այն ժամանակ հանդիսավոր արարողության գեկուցողն էր, դառնությամբ պատասխանեց. «Թուրքերի՞ն էլ հրավիրեմք...»:

Կրկժամում տարած հաղթանակը պատմական մեծ նշանակություն ունի, և իմ դասավանդման տարիներին հպարտությամբ էի նշում, որ նույնիսկ դասագրքերում գրվել է. «Արցախի պաշտպանական ուժերի առջև խնդիր դրվել է լուծելու և ոչնչացնելու Ստեփանակերտը և շրջակա հայկական գյուղերը ռմբակոծող թշնամու կրակակետերը: 1992թ. հունվարի 19-20-ը հայ ազատամարտիկները լիովին ազատագրեցին ռազմական հենակետերից մեկը՝ Կրկժամը: Այդ հաղթանակը քաղաքական և հոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ»: Կրկժամում տարած հաղթանակով մեր նորաստեղծ բանակի պատմության առաջին էջը գրվեց, առաջին նախադասությունը: Ահա թե ինչու եմ կարևոր համարում այդ օրը անպայման նախկինի պես նշել, ինչպես նաև՝ նախկինում տարած մեր բոլոր հաղթանակների օրերը, քանի որ դրանք մերն են, ու դրանցով դաստիարակվողները կրկին վերադարձնելու են մեր կորցրած հողերը և Արցախը դարձնելու են ծաղկուն, հզոր ու անկախ պետություն: Ես մեր Շարժման սկզբից օրագիր էի պահում, որն այսօր բանտարկված է Շուշիում, Ամիրյան 9/18 հասցեում, որտեղ բնակվում էր իմ թոռնուհի Թամար Շահնազարովան և հավաքել էր «Ո՛չ՝ պատերազմին» իմ ավելի քան 40 հոգվածները՝ գիրք հրատարակելու համար: Այդ 44-օրյա չարաղետ պատերազմը գրկել է ինձ նրանից իմ թոռնուհու ունեցվածքի հետ:

Կրկժամի մասին սևագրություններումս հանդիպել եմ մի քանի իրադարձությունների, որոնց ցանկանում եմ ծանոթացնել ընթերցողներին:

25-26 փետրվարի, 1989թ., շաբաթ-կիրակի: Քաղաքի բնակչության որոշմամբ այդ ոչ աշխատանքային օրերը պետք է աշխատեինք, որպեսզի փետրվարի 27-ին և 28-ին նշենք Սուևգայիթի զոհերի հիշատակը: Նույնիսկ դպրոցները կիրակի օրը պարապմունքներ անցկացրին:

27.02. 89թ.: Առավոտյան ժամը 9-ին բոլոր դպրոցներով ծաղիկներով գնացինք հուշահամալիր: Դպրոցականների հաջորդեցին արտադրական ձեռնարկությունների և պետական հիմնարկների աշխատողները: Հատուկ կոմիտեի անդամները նույնպես Վոլսկու գլխավորությամբ եկան ու ծաղկեպսակ դրեցին զոհվածների պատվին դրած հուշաքարին:

28.02. 89թ.: Կրկժամի թուրքերը երեկոյան կրակներ վառեցին և ուրախությամբ, վայրենի ճիչերով տոնեցին սուևգայիթյան ոճրագործությունը, որը գայրույթ առաջացրեց հայերի շրջանում, ու գիշերվա ժամը 2-ին գեներալի և Վոլսկու գլխավորությամբ տանկեր մտան Կրկժամ, որտեղ ամեն ինչ թաքցրին, կարծես ոչինչ չի կատարվել...

Մարտի 2-ին Կրկժամում հայերն ու թուրքերը դարձյալ ընդհարվեցին: Այնտեղ գնացին Հատուկ կոմիտեի անդամները՝ միլիցիայի ուղեկցությամբ: Միլիցիան թուրքերից վերցրեց 4 հրացան փամփուռներով:

15.05.89թ.: Կրկժամում պետք է հողակտորներ բաժանեին հայերին տուն կառուցելու համար: Տեղի աղբբեշանցիները թույլ չտվեցին:

1991թ. մայիսին թշնամուն հաջողվեց խորհրդային զորքերի օգնությամբ հայկական հատվածում կրակի մատնել 17 բնակելի տուն: Եվ այսպես ընդհարումները շարունակվում էին. չհայտարարված պատերազմ էր, որը շարունակվում է մինչև այսօր և կշարունակվի, քանի որ Աստված մեր կողքին դեղնակտուց Աղբբեշան է հարևան կարգել, որը Շուշիին տրամադրում է բազմատեսակ գեներ՝ Ստեփանակերտի դեմ օգտագործելու:

Կրկժամում առաջին անգամ եղել են 1954թ. նոյեմբերին, երբ աշխատում էի Ստեփանակերտի շրջանային մշակույթի տան տնօրենի պաշտոնում: Ինձ հետաքրքրում էր գյուղի մշակութային օջախների աշխատանքային դրվածքը. գրադարանը, ակումբը, բուժկետը, գյուղի դեկավարի գրասենյակը տեղակայված էին մի շենքում: Գրադարանավարուհի էր արժանահիշատակ Զաբելա Աղաջանյանը: Դպրոցում աշխատում էր հետագայի իմ գործընկեր և սիրված ընկեր, Արցախի թիվ 1 գրագետներից մեկը՝ արժանահիշատակ Բորիս Բաղդյանը՝ 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժը և ԼՂՀ վաստակավոր մանկավարժը: Այնժամ մտքովս էլ չէր անցնում, թե այդտեղ թուրքեր էլ են ապրում:

«Կրկժամ» անվանը ծանոթ էի պատմությունից, որ 1947թ. Կրկժամից, Շուշիից, Խանածախից, Բալուջայից, Փահլուրից շուրջ 60 ընտանիքներ եկել և Վարարակնի շրջակայքում բնակություն են հաստատել: Իսկ Վարարակնը հայտնի է 5-րդ դարից, երբ այդտեղ գալով՝ Վաչագան թագավորը նկատել է, որ մի տեղում իր ծին կանգնել և առաջ չի գնացել, ոտները գետնին խփելով խրխնջացել է: Թագավորի կարգադրությամբ ծին կանգնած տեղը փորել են, որտեղից ջուր է դուրս եկել, սառը, զուլալ ջուր: Թագավորն այն անվանել է Վարարակն, որը, ինչպես վերը նշեցի, որպես բնակավայր հայտնի է 1847 թվականից, իսկ Խանքենդիին, որ Ստեփանակերտ է կոչվել, 1923թ. սեպտեմբերի 18-ից է, կուսակցության մարզկոմի որոշմամբ (չգիտեմ ինչու քաղաքի օրը տոնվում է հոկտեմբերին): Ընդհանրապես իրադարձությունները, թվական տվյալները պետք է սրբությամբ, ճշտությամբ պահպանել: Մինչդեռ, չգիտեմ ինչու, աղավաղվում են: Այսօր, ինչպես վերևում նշեցի, դասագրքերում գրված է, որ 1992թ. հունվարի 19-20-ը հայ ազատամարտիկները լիովին ազատագրեցին ռազմական հենակետերից մեկը՝ Կրկժամը, իսկ Արցախ-Ղարաբաղ հանրազիտարանի 351-րդ էջում ընթերցում եմ. «В ночь с 21 на 22 января 1992г. в результате эффективной действий армянских азатамантиков была уничтожена находившийся в квартале Кржжан (бывший Каркарашен) г. Степанакерта опорная база азербайджанского ОМОНА»: Այս օրերին ուշի ուշով հետևում եմ, թե երբ է նշվելու առաջին հաղթանակի տարեդարձը:

Կրկժամի անցյալի մասին ոչինչ չգիտեի, բայց իմ նախկին աշակերտների, առանձնապես Սարգիս Գալստյանի պատմածից, որի պատմ ու տատոն այդտեղի բնակիչներ են եղել, շատ բան իմացա: Այստեղ գտնվող եկեղեցու հետքերը և նրա տարածքի շիրմաքարերը 13-րդ դարից են: Մինչև օրս գործում է Կարմիր խաչ կոչվող սրբավայրը: «Կարմիր» անունը ստացել է այդ սրբավայրում աճած փռչնի ծառի կարմիր ծաղիկներից: Քանի որ գյուղը Կարկառ գետի ձախ ափին է, կոչվել է Կարկառաշեն, որը նաև նշանակում է բարձր տեղ, այսինքն, կարկառ՝ բարձր գլուխ, կարկառ: Գյուղի բնակչությունը զբաղվում էր շերամաբուծությամբ և աշխատում էր Կարկառի ափին գտնվող մետաքսագործական ֆաբրիկայում:

Գյուղը մի քանի անգամ թալանվել ու սպանդի է ենթարկվել թուրք-ազերիների կողմից, որից ամենասարսափելին 1919թ. հունիսի 4-ի և 5-ի ջարդն էր, որ կազմակերպել էր Խոսրովը բել Սուլթանովը 1920թ. մարտին Շուշիում, որի հետևանքով Կրկժամի բնակչությունը տեղափոխվում է Ստեփանակերտ ու հաստատվում ներկայիս Մարտունի և Թունամանյան փողոցների վերին հատվածում: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո վերադառնալով նախկին բնակավայրերը՝ հնարավոր չէր վերականգնել հին բնակավայրերը, քանի որ հրկիզվել և հողին էին հավասարեցվել: Ուստի ստիպված մեր տներ են կառուցել աղբյուրից մերթև գտնվող թեթևու այգիների տարածքում: Գյուղի բնակչությունը միատարր էր: Սակայն նրա ավերված մասում բնակչություն հաստատեց Լաչինից եկած 3 ընտանիք: Քրդական ընտանիք, որի շուրջը իշամեղուների պես հավաքվեցին աղբբեշանցի կոչեցյալներ, և բազմանալով՝ 1988-ի սկզբին արդեն կար 427 աղբբեշանական ընտանիք, որն ուներ 760 աշակերտով թիվ 6 միջնակարգ դպրոցը: Իսկ թե Ստեփանակերտն ինչպես թուրք ազերիներ ընդունեց, այլ թեմա է:

Մառլեն ՀԱՅՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր գործիչ, անհարական թոշակառու

ՄՈՐԱ ԱՂՈԹՔԸ ՏԵՂ ՀԱՍԱՎ, ԲԱՅՑ ՊԱՏՊԱՆՆԵՐ՝ ՈՉ



Պատերազմը մեր ընտանիքի համար արտակարգ, զարմանալի երևույթ չէ. սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ այն մեր կենսագրության, կենցաղի մասն է: Ասեմ ինչու: Տակավին 1920թ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ գյուղամերձ «Խաներ» տեղամասում (Շուշվա խաների դրածոներ կային այստեղ, որոնց զբաղմունքն անասնապահությունն էր, և արոտավայրերի, նաև ազգամիջյան հարաբերությունների պատրվակով ընդհարումներ են միջնացնում հետ հաճախ էին լինում) գոհվում է պապիս եղբայրը՝ Արտեմ Առաքելյանը: Պապս՝ Գրիշա Առաքելյանը, Հայրենական պատերազմի 2-րդ կարգի հաշմանդան էր, նրա եղբայրը՝ Արտեմ Առաքելյանը, գոհվել է Հայրենական պատերազմում, տատիս եղբայրը՝ Սամսոն Խաչատրյանը, նույնպես գոհվել է Մեծ հայրենական պատերազմում: Մեծ հայրենական պատերազմում էր, ավագ եղբայրներս՝ Միքայել և Մխիթարը, նույնպես պատերազմի մասնակիցներ են ու իրենց ծառայությունը 1994թ. մայիսից հետո անց են կացրել նոր ձևավորվող տանկային զնդուն (հրամանատար՝ Վ. Բալայան): Ի դեպ, նրանք առաջին և երկրորդ զորահանդեսների մասնակիցներ են:

Արցախյան 30-ամյա պատերազմի 2016թ. մարտական գործողություններին արդեն մասնակցում էինք երեք եղբայրներով: Պատերազմի երկրորդ օրն առանց վարանելու դասամատյանը դրեցի դարակը ու զնացի շրջանային զինկոմիսարիստ: «Հաղթանակով վերադարձեք» մորս պատգամը հոգիս տանկավոր արեց: Ես ակամայից զարմացած էի. մայրս ինչպե՞ս է թողարկում հոգեկան ապրումները, ի՞նչ էր անում, որ ներքին խռովքը դուրս չէր ժայթքում սրտի խորքից, երբ երեք որդիներին ծանապարհում էր մարտի դաշտ, ասել է թե՛ ստույգ մահվանը ընդառաջ: Իսկ երբ դուրս էինք գալիս բակից, գողունի հայացքով հետ նայեցի. մայրս գրկել էր կրտսեր եղբորս՝ Նորայրին, հայացքը հառել երկնքին: Ես հազիվ լսեցի նրա մրմունջը. «Գոնե դու այս արհավիրքը չտեսնես»:

Մորս բնավորության այս կարծրությունը հավանաբար գալիս է նրա աշխատանքային տարիներից: Շուրջ չորս ու կես տասնամյակ նա գյուղի բուժկետի միակ աշխատողն էր: Անշուշտ, բուժսպասարկման ոլորտը շատ է փոխվել: Արցախյան գոյապայքարի սկզբնական տարիներին շատ դժվարություններ

կային, դեղորայքի, մասնագետ բժիշկների, տեխնիկական սարքավորումների, տրանսպորտային միջոցների պակաս (գյուղերից հիվանդանոց տեղափոխելու համար): Պարզ է, նման պարագայում մի քանի անգամ մեծանում էր բուժաշխատողի պատասխանատվությունը: Այս ամենին զուգարած նաև այն, որ Արցախյան գոյապայքարի 30 տարիների ընթացքում գեթ մեկ օրով չի լքել հարազատ օջախը: Նույնիսկ 2020թ. սեպտեմբերին վերսկսված մարտական գործողությունների ժամանակ, երբ գյուղերում, նույնիսկ քաղաքներում հատուկներ տարդիկ էին մնացել, մայրս կարակամապես մերժեց գյուղից դուրս գալու գաղափարը: «Մենակ անզգա մայրը կարող է իր որդիներին քողնել գազանի երախում և մտածել սեփական կյանքի մասին: Անգամ զագանները, զգալով վտանգը, չեն լքում իրենց ծագերին: Չէ, թիկունքը թուլացնելու մտադրություն չունեն».

սա մորս պնդումն էր: Դեռ չէինք հասցրել բուժել 1916թ. ապրիլին ստացած վերքերը, դեռ օղը չէր մաքրվել վառողի հոտից, երբ թնդանոթները վերստին որոտացին, ինքնաթիռները, ԱԹՍ-ները վերստին թրատեցին Արցախ աշխարհի օդային տարածքը: Պատերազմի ծանր ու գորշ կյանքը ճգմել սկսեց մեր խաղաղ կյանքը: Առաջինը, որ հիշեցի, այն էր՝ մորս մրմունջը, հասցեագրված Նորայրին, տեղ չհասավ (զուգե նրանից էր, որ մայրս հաճախ էր կրկնում. «Բավ է, որքան եկեղեցիներ եք շինել, զենք գնեցեք է՛, զենք»):

Չորս եղբայրներով սպասում էինք մորս օրհնանքին: Նա մի քանի հայիոյանք շարտեք թուրք դահիճներին (ոչ ժողովրդին), դառնալով մեզ՝ սաաց. «Դուք ծնված օրվանից հայրենիքի պաշտպաններ եք, եկել է ժամը ձեր պարտքը տալու: Վերադարձե՛ք հաղթանակով»:


Պատերազմի երկրորդ օրը մայրս մշակեց տղաների հետ հեռախոսակապի հատուկ ռեժիմ: Այն հետևյալն էր. ինքն առավոտյան, կեսօրին, երեկոյան (մոտավորապես նույն ժամերին) կապի մեջ էր մտնելու տղաների հետ՝ ավագից կրտսեր: Տղաներն էլ օրվա ընթացքում երկու անգամ կապ են հաստատելու իրար հետ, մեկական անգամ զանգելու են տուն: Մխիթարը լրացուցիչ կեսգիշերին բոլորի մասին տեղեկություն է հաղորդելու տուն: Մորս այս «աշխատանքային ռեժիմը» ձեռնտու էր բոլորիս հենց նրա համար, որ միմյանց որպիսությանը տեղյակ էինք լինում:

Պատահեց այնպես, որ Նորայրին տեղափոխեցին մոր դիրք՝ Մարտակերտի դիրքերից՝ Խնուշինակ (նա ռադիոհետախուզությունում էր ծառայում) այն հաշվով, որ ռազմաճակատի հարավային ուղղությունը շատ ավելի լարված է: Բնականաբար, այդ մասին բոլորս գիտեինք: Մայրս մի քիչ տագնապ ապրեց, բայց և գիտակցումով մոտեցավ. «Պատերազմ է, տեղաշարժեր, անշուշտ, կլինեն»:



ԱՊՐԵԼՈՒ ԵՆՔ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԻՆՔՍ ԻՆՁ ՈՒ ՉԵՉ ՀԵՏ



Պատահիկներ անցյալից ու անցյալի հուշերից: Իմ հուշերն ինձ հուշում են և անգամ խորհրդավոր պարտադրում, ներկան պարտավորեցնում, իսկ ապագան հուսադրում: Այսօր, ցավոք, մեր ապագան անորոշ է ու մշուշոտ, առջևում՝ մառախլապատ թունել, թունելի վերջում՝ հույսի ու լույսի մի ուրվական:

Ուզում եմ հեռահար կապի մեջ մնալ և կիսվել իմ հայրենակիցների ու համագյուղացիների, իմ մասնագետ ու մտավորական գործընկերների, հասարակական բոլոր շերտերի հետ և իմ մտահոգությունները հայտնել: Ուզում եմ կյանքիս վերջնահատվածում դառնություններն ու դժբախտությունները թողնել ոչ միակողմանի անկյունում, այլ ամենօրյա տեսողաշտում և օրակարգում արժանագրել ու բերել ամենաառաջնայինը, ամենահրատապը ու օրախնդիրը: Մենք բոլորս դեռ ենք գլխից քաջ գիտե՞ինք մի դառն ճշմարտություն. ուր էլ մեզ զգի ճակատագիրը, ուր էլ մեզ տանի, էլի մենք մույնն ենք, անկախ քաղաքական հայացքներից՝ մնում ենք կապված մեր արմատներին, մեր պատմությանը, ավանդույթներին, մշակույթին ու լեզվին: Երկրի վրա մենք քիչ ենք, բայց մեզանից յուրաքանչյուրն այնքան գործունյա է, որ ամենուրեք նկատելի է: Ուստի, երբ աստղային երկնքում մի նոր աստղ է ծագում, և նրա փայլն առաջացնում է ամբողջ աշխարհի հիացմունքը, դա մեր ազգի հպարտությունն է, պատիվն ու արժանապատվությունը, փառքն ու պսակը:

Ուր էլ մենք լինենք՝ մշակ թե անմշակ, դե ազգ ենք էլի, մեկից պակաս, տասնմեկի հետ հավասար, հարյուր ու մեկից առավել, շատ չենք ասում, եղածն ենք ասում, մեր արյունը պարզ է ու շիտակ: Մեր բոլոր կերտած սրբություններն արյամբ են շաղախված, մեռնով օծված և մարտիրոսված մեր հավատքի մեծ արյամբ ու նշխարով ամրացած, աղոթքով ու խունկով օրհնված:

Հիշենք սևայկան ոսկե բառերը. «Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում...»:

Պարզապես մենք ունենք այն, որ ոչ մի ազգ չունի, չի էլ ունեցել ու չի ունենա: Ցավալիք այն է, որ խլում են մեզանից, զողանում-տանում ու սեփականում, փոխում-ձևակերպում, օտարացնում: Թուրք լինի թե քուրդ, աղբրեջանցի թե վրացի, խլում են ու հափշտակում, անգամ սպառնում, որ չի էլ եղել բաց երկնքի տակ և ոչ մի խաչքար:

Ախր մենք ունենք Արարատ ու Նոյան տապան, Գառնի, Զվարթնոց, Խոր վիրապ ու Գեղարք, պանթեոն՝ սրբոց նահատակների սուրբ հիշատակին և Մեսրոպ Մաշտոց և մատենագիր ամենայն հայոց, Մեծն Նարեկացի տիեզերական փառաց վարդապետաց, ունենք և փառքի թանգարան հայոց, թանգարան նաև բաց երկնքի տակ, հայրենիք հայոց, ունենք Մայր Աթոռ Քաղաքապետարան, սրբապետարան հենց ձեռնաց Աստծո... Ախր մենք ունենք, ունենք և բարձունք հերոսական ազգի սերունդը սուրբ մվիրակամ՝ Անդրամիկի ու Ավո, Վազգեն ու էլի հազար-հազար նոր հերոսների սուրբ հիշատակին:

Ամեն մի քայլս մի կաթիլ արցունք, ամեն մի շունչս մի «ախ» է անհույս, ամեն մի ծաղիկ մի կյանք է կորսված: Վա՛յ ձեզ, տղաներ, իմ մարտընկերներ, ի՞նչ անեմ, ասեք, ուզում եմ թողնել մի սուրբ հիշատակ, ի՞նչ անեմ, ասեք: Ու լսվեց խորքից մի ձայն խորհրդոց. «Հիշե՛ք մեզ անվերջ, հիշե՛ք թե՛ քնած, թե՛ արթուն պահի, հիշե՛ք ու հիշե՛ք ու մի մոռացե՛ք, ինչքան որ հիշե՛ք, մենք ձեզ հետ կապրենք, քանզի մենք ոչ միայն հիշում ենք, այլև տեսնում ենք ձեզ տխուր ու մոլոր,

պետք չէ հանձնվել, պիտ հաղթահարել՝ փյունիկի նման նորից վեր հանել:

Ուզում եմ ուժի ամբողջ լարումով գոռալ. - Ինչո՞ւ, ախ, ինչո՞ւ, ինչպե՞ս պատահեց, որ նորից հասանք անդունդի եզրին ու նորից-նորից զոհե՛ր ու զոհեր, անհետ ու գերի, անտուն փախստական, վիրավոր ու զամված անշարժ ու անհույս, նորից հացադուլ, նորից մտացույց, ստի, կեղծիքի մեջ նորից խաբեցին, և ահա-ահա հազարավոր տղաներ, մի ամբողջ սերունդ մնաց անսերունդ:

Սգավոր մայրեր, սևազգեստ քույրեր ու հարսնացուներ, որբացած երեխաներ, որդեկորույս ծնողներ, այրիացած կանայք, փշրված ու ջարդված մարտական ընկերներ, հուսախաբված հասարակություն, քանզի չկա հաստատուն ոչինչ:

Այս բոլորի արդյունքում ի՞նչ ունեցանք. կորուստներ-կորուստներ թե՛ տարածքային և թե՛ մարդկային: Եվ ցավալիք այն է, որ անտարբերությունը տանում է դեպի սովեր, դեպի ինքնամոռացություն, դեպի ինքնազոհություն:

Ցավալի երևույթներից նաև այն է, որ երկի թե չունենք Հաղթանակի օր, Շուշիի ազատագրման և այլ տոնական օրեր:

Մնում է միայն ապավինել մեր բազկի ուժին, նորից վերամիավորվել, վերածնվել, ազատագրվել, վերադառնալ հայրենի օջախներ, սկսել նորից, շարունակել կյանքը հանուն ապագայի, հանուն նոր սերնդի ու վաղվա լուսավոր օրվա:

Փառք ու խոնարհում՝ հավերժի ճամփորդ դարձած մեր նահատակ հերոսներին:

ԹԱՂԱՎԱՐՈՂ

...Հայրենի տունս, օջախ ու գյուղս, Գերության թողած անհանգիստ քունս... Յու. Բ.

Հայրենի գյուղ իմ Թաղավարդ, Հայրենի տուն իմ Թաղավարդ, Իմ մանկության հանդ ու օջախ, Հասուն կյանքիս օրհնած մատաղ:

Բազում անգամ քեզ վերբել են, Ձարգացունդ միշտ հերքել են, Սերունդներդ քեզ երգել են, Այգիներդ միշտ բերբել են:

Իմ Թաղավարդ, իմ ծաղկավարդ, Կարոտի մեջ հույսս դարձած, Գերության մեջ դու դեռ անհայտ, Իմ ուխտավայր, իմ Թաղավարդ:

(Նվիրում եմ զոհված որդուս՝ Նաիրի Բեգլարյանի անունը կրող թոռանս՝ Նաիրի Բեգլարյանի ծննդյան օրվան)

ԿԱՐՈՏ

Օջախում մորս ծայնն եմ լսում, Պապիս խորհուրդը նահապետական... Յու. Բ.

Կարոտել եմ իմ հայրենի հանդերին, Կարոտել եմ աղբյուրներին սառնորակ, Կարոտել եմ իմ երկնահաս լեռներին, Կարոտել եմ քեզ, հայրենի՝ Թաղավարդ:

Կարոտել եմ իմ օջախին հայրական, Դարձել եմ քեզ հայրենիքի պահապան, Եղել ես միշտ հայաշունչ ու հայկական, Կարոտել եմ, սրբավայր իմ Թաղավարդ:

Ասում եմ, թե հույսը ապրում է անվերջ, Եվ իմ հույսն էլ դեռ ապրում է իմ մեջ, Հույսը կյանք է, և կյանքը՝ հույս, Դարձած հույս ու կանթեղի լույս Թաղավարդ:

Երևան - Մասիս 05.12.2020թ.

ՄՈՐԱ ԱՂՈՅԸ ԵՂ ՎԱՍԱԿ, ԲԱՅՑ ՊԱՏԳԱՍԸ՝ ՈՉ

Մեկ օրից հետո Նորայրը զանգում է տուն և հայտնում, որ կրկին տեղափոխելու են նախկին դիրքերը: Այնինչ նույնիսկ անտառում պատասպարած տեխնիկական սարքավորումները թիրախ էին դարձել թշնամու ԱԹՍ-ների համար, ու նրանք ուղիղ նշանառությամբ հարվածում էին թիրախին: Անձնակազմի չորս անդամներ, այդ թվում՝ Նորայրը, բեկորային վնասվածքներ են ստանում: Նորայրը հետագայում պատմել է, որ ընկերները վիրավոր, ուշագնաց վիճակում իրեն տեղափոխել են ապահով տեղ: Այդ վիճակում մնացել է մի քանի ժամ և երբ գիտակցության է եկել, զանգել է Մխիթարին ու պատմել եղածը, միաժամանակ խնդրել, որ մայրիկին չասի: Նորայրին տեղափոխել են Գիշու, հետո Ստեփանակերտի, այնուհետև՝ Գորիսի հուսպիտալները, այնտեղից էլ Երևան՝ մարմնում մի քանի տասնյակ բեկորներ:

Բարեբախտաբար Նորայրի հարսնացուն գտնվում էր Երևանում, և իրավունք էին տվել նախնական շրջանում խնամել վիրավորին:

Մայրս ըստ ռեժիմի ամեն օր խոսում էր բոլորիս հետ, իսկ Նորայրին, որպես անփորձի, հորդորում գիշերները քնով չանցնել, աչալուրջ ու զգոն լինել, լավ սնվել, աշխատել չմոռնալ: Նորայրն էլ իր հերթին, իբր դիրքերից, պատասխանում էր. «Ամեն ինչ նորմալ է, առաջնագծից հեռու ենք, թշնամին այս կողմերում ակտիվ չէ»: Ու այսպես՝ մեկ ամիս:

Չարաբաստիկ պատերազմը չարաբաստիկ ելքով էլ ավարտվեց: Հուսալքված, հոշոտված տրամադրությամբ, գիտակցության մեջ չտեղավորվող զգացողությամբ վերադառնում ենք տուն: Ինչ խոսք, շատերը, այդ թվում՝ եղբայրներս, ողջ պատերազմի ընթացքում գեթ մեկ ժամով էլ չեն եղել հայրական օջախում՝ ծնողների մոտ: Անկախ ամեն ինչից, ձգտում էինք ժամ առաջ (այդպես էինք պայմանավորվել) տուն հասնել ոչ այնքան կարտուներս առնելու, որքան՝ պատերազմի ելքի մասին խորհելու, դատողություններ անելու, կիսվելու:

Մայրս գրկաբաց ընդունեց մեզ, բայց դեմքին ժպիտ չկար. «Փառք Աստծո, բոլորդ եկել եք, բայց պատգամս որտե՞ղ եք թողել»: Մենք իրար երեսի նայեցինք ու խոսքեր չէինք գտնում պատասխանելու: Պատերազմում կրած սոսկալի պարտությունը շատ էր ազդել մորս վրա, այնքան, որ չէր էլ նկատում, որ տղաներից կրտսերը տուն չէր եկել: Դեռ մի բերան էլ պատմում էր, որ գյուղի տարեց կանանց, որոնք չեն լքել գյուղը, իր հարկի տակ տեղ է տվել, որ մայրաքաղաքից եկած բարեկամներին իր հարկի տակ տեղ է տվել, որ օջախը, իրոք, գործություն ունի, ձգողական ուժ ունի, և շատ ուրախ է, որ գյուղից չի հեռացել, թիկունքը չի թուլացրել: Գիտե՞ք, գյուղերն ինքնին խուճապի պատրվակ են ստեղծում և թիկունքը թուլացնում: Եվ միայն երբ սթափվեց ու շուրջը նայեց, նոր նկատեց, որ Նորայրը մեզ հետ չէ: Թաքցնելը դարձավ անիմաստ: Նորայրի վիրավորվելու մասին երբ լսեց, աչքերը տամկացան, բայց աշխատեց ցույց չտալ: «Ուրեմն ամեն օր երևանի՞ց էր պատասխանում զանգերիս, լավ է, շատ լավ է, որ կյանքին վտանգ չի սպառնում: Ինչքան որդեկորույս մայրեր կան», - ասաց, զարկեց ծնկներին ու հայացքը փախցրեց պատուհանից դուրս, դեպի երկնքի լազուրը:

Այդ պահից ուղիղ մեկուկես ամիս հետո մայրս հրաժեշտ տվեց երկրային կյանքին 65 տարեկան հասակում: Մենք տարակուսանքի մեջ էինք. ի՞նչը նրա դիմացկուն սրտին հարված հասցրեց, անսահման ուրախության երանելի պա՛հը, որ եղբայրներով վերադարձել էինք մարտի դաշտից, թե՛ պատերազմում կրած պարտության հետևանքով բզկտված հայրենիքի վիշտը, որի համար տասնամյակներ շարունակ պայքարել է համայն հայությունը, նրանց շարքերում էլ՝ իր ամուսինն ու որդիները:

Մայրս, քո աղոթքը, իրոք, փրկեց մեզ, բայց քո պատգամը չկարողացանք կատարել: Ներիր մեզ..., գուցե թե մի ուրիշ անգամ հաջողվի կորցրածը հետ բերել:

Հետո միայն իմացա, որ մորս բնավորության թվացյալ կարծրության տակ շատ փխրուն ու նրբազգաց սիրտ էր բաբախում:

Գրիշա ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՎԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Մ.թ.ա. 714թ. Ասորական կայսրությունը հարձակվեց Հայաստանի վրա և ավերեց այն: Վաթուռնչորս տարի անց (մ.թ.ա. 650թ.) Ասորական կայսրությունը փլուզվեց և ընդմիջտ անհետացավ աշխարհի քարտեզից:
2) 387թ. Հռոմեական կայսրությունը դավաճանաբար խաբեց հայերին և, ոչնչացնելով Մեծ Հայաստանը, բաժանեց այն իր և Պարթևստանի միջև: Ութ տարի անց (395թ.), Հռոմեական կայսրությունը կործանվեց և ընդմիջտ հեռացավ համաշխարհային քաղաքական ասպարեզից:
3) 1045թ. Բյուզանդական կայսրությունը դավաճանորեն ոչնչացրեց հայկական Անիի թագավորությունը: Քսանվոց տարի անց (1071թ.) Բյուզանդիան կորցրեց իր ունեց-

- վածքի 80%-ը, ինչը դարձավ դրա ավարտի սկիզբը և համաշխարհային ասպարեզից ամբողջովին անհետանալու պատճառը:
4) 1605-1795թթ. Պարսկական կայսրությունը հայերին տեղահանեց Անդրկովկասից՝ ավերելով և արյունահոսելով հայկական քաղաքներն ու գյուղերը՝ բնակեցնելով նրանց մահմեդականներով: 33 տարի անց (1827-1828թթ.) Պարսկական կայսրությունը լուրջ ռազմական պարտություններ կրեց և կորցրեց վերահսկողությունը ամբողջ Անդրկովկասի վրա, ինչը Պարսկական կայսրության վերջի սկիզբն էր:
5) 1915թ. Օսմանյան կայսրությունը իրականացրեց Հայոց ցեղասպանությունը: Երեք տարի անց (1918թ.) Օսմանյան կայսրությու-

- նը կործանվեց և ընդմիջտ անհետացավ համաշխարհային քաղաքական ասպարեզից:
6) 1905թ. Ռուսական կայսրությունը՝ Նիկոլայ II-ի գլխավորությամբ, սարսափ սկսեց Հայ Առաքելական եկեղեցու դեմ և կազմակերպեց հայկական ջարդերը Անդրկովկասի քաղաքներում ու գյուղերում: Տասներկու տարի անց (1917թ.), Նիկոլայ II-ը կորցրեց իշխանությունը և 1918-ին գեղակահարվեց իր ամբողջ ընտանիքի հետ, Ռուսաստանի կայսրությունը կործանվեց և ընդմիջտ հեռացավ համաշխարհային ասպարեզից:
7) 1988-1990թթ. ԽՍՀՄ-ը սկսեց հակահայկական քաղաքականություն վարել Արցախում՝ կազմակերպելով հայերի ար-

- տաքսունը Արցախի գյուղերից («Օղակ» գործողությունը) և անգործունակության մատնվեց Աղբրեջանական ԽՍՀ-ում հայերի ջարդերի ժամանակ: Մեկ տարի անց (1991թ.) ԽՍՀՄ-ը փլուզվեց և հեռացավ քաղաքական ասպարեզից:
Հետաքրքիր օրինակ է այն, որ աշխարհի բոլոր ուժեղագույն կայսրությունները հավերժ ոչնչացել են այն բանից հետո, երբ փորձել են ոչնչացնել հայերին: Եվ այս կայսրություններին յուրաքանչյուրը 100% -ով վստահ է եղել «անպարտելիության» մեջ: Եվ Հայաստանը շարունակում է ապրել:

Ալեքսանդր ԲԱԿՈՒԻՆ

ԿՅԱՆՔ ԵՎ ԿՈՒԿ

ԻՄ ՏԵՐԸ ԵՌԱՔԼՈՒԻՐՈՒՄ Է. ՍԱՍՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Անցած տարվա պատերազմը խլեց հազարավոր կյանքեր: Հայրենիքի պաշտպանության համար կյանքը չխնայած բազում հայորդիների անվանացանկում է նաև Սասուն Սամվելի Ավետիսյանը, որը «Լուսարար»-ի ընթերցողներին ծանոթ էր սիրագործության հանդեպ հակում ունենալու իր հատկությունները: Անվախ անձնավորություն, որը, ամենուրեք վտանգը, նետվել էր ջրանցքը ու փրկել ջրահեղձ լինող անծանոթ կնոջ կյանքը: Շատերն են հիշում Սասունի այդ անձնուրաց արարքը, որով հպարտանում էին նրա որդիներ՝ մուսայ թայի մեր մարզիկներ Անդրեյ և Արման Ավետիսյանները: Մարզիկ եղբայրները...

որը եւ նրանց պարուհի թույլը՝ Անահիտը, դարձան հավերժ հերոսի զավակներ: Փրկարարի ոգով, համարձակ ու անձնվեր տաքսու վարորդը մեկ վայրկյան անգամ չհապաղեց, սեպտեմբերի 27-ին հայրենիքն էր վտանգի մեջ հայտնվել, պետք էր փրկել... ցավոք, կյանքի գնով:

Սասուն Ավետիսյանը ծնվել է 1983թ. օգոստոսի 7-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ե. Չարենցի անվան հ. 7 դպրոցը: Ծառայել է ԱՀ ՊԲ շարքերում: Սերժանտ էր: Հայրենասեր էր ու ընկերասեր: Աշխատում էր որպես տաքսու վարորդ, երբեք էր կատարում Ստեփանակերտ-Երևան ու հակառակ երթուղով: Կարելիք էր մարդկանց հանդեպ, սիրում էր օգնության ձեռք մեկնել բոլորին: Քույրը՝ Լիլիթը, պատմում է, որ նա հաճախ կրկնում էր. «Ես հենց այնպես չեմ մահանալու: Պատերազմ է լինելու, ես հերոսի մահով զոհվելու եմ: Իմ տեղը Եռաբլուրում է»: Կանխագագո՞ւմ էր, թե՞ խոսքն այդքան ուժ ունի. ի՞նչ իմանաս... Բայց այն, որ նրա այդ խոսքերն ամբողջովին նկարագրում են իր կատարյալ հայրենամեծերը մարդ տեսակը, խիզախությունը, սերը հայրենիքի ու հարազատների նկատմամբ՝ ակնհայտ է:

Քույրը պատմում է, որ պատերազմի հենց առաջին օրը Սասունը կամավորագրվեց, հետո նրան կանչեցին զինվորական կոմիսարիատից: Ութ հոգանոց խմբով պաշտպանում էին Մարտունի-Հաղորուս հատման կետում գտնվող դիրքերից մեկը: Հոկտեմբերի 9-ի առավոտյան վրա հասած թշնամու բայրաք-



տար անօդաչու թռչող համակարգի հարվածից զոհվեցին Սասունն ու նրա դիրքապահ ընկերներից չորսը: Նախօրեին երեկոյան Սասունը զանգել էր ծնողներին ու երեխաներին,

համոզվել, որ լավ են. պատմել է ողջ մնացած դիրքապահ ընկերներից մեկը ու ավելացրել, որ Սասունը իրենց էլ էր հորդորում կապվել հարազատների հետ՝ կարելու ազատվել դա համարելով: Ցավոք, հարազատները վերջին անգամ լսեցին նրա ձայնը: Որդու կորստով վշտացած մայրն ասում է, որ Սասունը կյանքեր փրկեց, բայց Աստված չխնայեց նրա կյանքը:

Սառնասրտորեն նայելով մահվան աչքերին՝ Սասուն Ավետիսյանը գնաց միաձուլվելու հայրենիքի սահմանների անառիկության համար հերոսացած քաջերի թույլին: Մարմինը հանգչում է Եռաբլուր պանթեոնում:

Որդիները շարունակում են մարզվել մուսայ թայ մարզածեղով մարզիչ Ալեքսան Աղաբալյանի մոտ: Պատերազմն անդառնալի կորուստներ տվեց, բայց այն չպետք է կտրի արցախցու ոգին: Պետք է կոփվել ավելի եռանդով, ոգով եւ ուժով, հարկ եղած դեպքում՝ արժանապատվորեն շարունակելու մեր հերոսների սիրագործությունները:

Հայտնում ենք ցավակցություն եւ զորակցություն Սասուն Ավետիսյանի ընտանիքին, հարազատներին:

ԽԱՂԱՂ ԿՅԱՆՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԵՎԱՑ ՄԱՐԴՈՒ ՇԱՄԱՐ

Հետպատերազմյան ծանր շրջանում հաճախակի հանդիպող խնդիրներից են պատերազմի արհավիրքով անցած մեր զինվորների ծանր ապրումների ու հոգեվիճակի բարելավումը, հնարավոր հոգեկան տրավմաների վերհանումն ու վերացումը: Ի՞նչ խնդիրների հետ են առնչվում զինվորները խաղաղ կյանքի պայմաններում, ինչպե՞ս օգնել հետվնասվածքալին ստորեւային խանգարումների ու հետպատերազմյան համախտանիշի դեպքում:

Դյուրագրգռություն են ազդեցիկ, անտարբերություն, թյուրըմբռնում, ինչպե՞ս ապրել հետո. շատ զինվորներ, վերադառնալով պատերազմից, առնչվում են սրա հետ: Եթե անգամ մարմնին վնաս չի եկել, հոգու վնասվածքները եւ մշտական սթրեսի վիճակն անհետք չեն անցնում: Դրանից տառապում են եւ զինվորները, եւ նրանց ընտանիքներն ու հարազատները:

Ի՞նչ է կատարվում պատերազմն անցած մարդու հոգեկանում: Ինչո՞ւ այդքան դժվար է «թողնել» կռիվն այնտեղ եւ վերադառնալ խաղաղ կյանք: Կարո՞ղ են, արդյոք, մտերիմներն օգնել նրան ինքնահաստատվելու խաղաղ կյանքում:

Մարդիկ, իսկապես, պատերազմում շատ են փոխվում: Առաջին պատճառը ֆիզիոլոգիան է: Մարտական գործողությունների գոտում զինվորի կյանքը վտանգի տակ է անընդհատ: Նա չի կարող փոխել դա, իսկ գոյատևելու համար միակ միջոցը վարքի նոր կադապրներ իր մեջ հաստատելն է: Ռազմիկը միշտ զգոն է, նկատում է շրջակա միջավայրում բոլոր փոփոխությունները, ակնթարթորեն է արձագանքում պոտենցիալ ցանկացած վտանգի: Այդ արձագանքն է նրա ու զինակիցների կյանքի գինը: Այդ պատճառով էլ դա ամուր խրվում է հոգեկանի մեջ որպես բնագր: Նա վերադառնում է պատերազմից, բայց պատերազմը նրա մեջ մնում է իբրև մշտական սթրես: Ամենատրավման իրադրությունն էլ կարող է նրա գլխում «պատերազմի ռեժիմ» միացնել: Մարդն անցնում է թեկուզ բազմաթիվ բաց դռան մոտով, ուղեղն ազդարարում է, որ վտանգ կա, այնտեղ կարող է թշնամի լինել: Լսում է որեւէ բարձր ձայն՝ դռան խփոց, պայթյունի ձայն, նրան թվում է, թե կրակոց է, պետք է ընկնել գետնին եւ գտնել թաքստոց: Դրանք անգիտակցական երեւոյթներ են, գործում են բնագրների մակարդակում մախքան մարդու կողմից իրադրությանը գնահատական տալը:

Մշտական նյարդային լարվածության հետևանքով մարդը դյուրագրգռ է դառնում, դուրս է նետում բացասական հույզեր անմշան բաներից: Նա ջղայնանում է, գոռում: Ավտոհիստերիկ խնդրներն օգնում են լիցքաթափվել, բայց միեւնոյն ժամանակ էլ դրանք են սրացնում ապրումները:

Կարող են առաջանալ ապակոդմորոշման նուպաներ. մարտիկը, հանկարծ արթնանալով՝ կարող է չհասկանալ, թե որտեղ է գտնվում: Ան-

պի որոտն անգամ կարող է խուճապի մեջ գցել նրան, եթե նա կարծի, թե դեռ մարտադաշտում է, եւ որոտի ձայնը կրակոցի ձայն թվա: Շատերը չեն կարողանում քնել ընդհանրապես, իսկ եթե քնով են անցնում, տառապում են մղձավանջներում: Այստեղից էլ՝ դեպրեսիան, օտարացում, ազդեցիկի բարձրացված աստիճան: Բացի հարմարվողականության հետ խնդիրներ ունենալուց, պատերազմում ռազմա-



կան գործողությունների մասնակցած զինվորները կարող են ունենալ հետվնասվածքային համախտանիշ: Հոգեկանի այդ վիճակը կարող է ախտորոշել միայն հոգեբույժը, իսկ առանց մասնագիտական օգնության դա հաղթահարելը շատ դժվար է: Այն, ինչ կատարվում է նրանց հետ, հիվանդությունն է, դա հոգեկանի նորմալ ռեակցիան է վնասվածքածին իրադրությանը:

Առօրյա կյանքին վերադառնալու համար բավական չէ պարզապես վերադառնալ տուն: Պետք է սովորել անցյալում այն մեխանիզմները, որոնք ապահովում են գոյությունը մարտական գործողությունների գոտում, եւ միացնել այն մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են խաղաղ կյանքում: Որպեսզի մարդը հասկանա, որ բաղնիքի մութ դռները պարզապես բաղնիքի մութ դռներն են: Դա արդեն հոգեբանի համապատասխան աշխատանքն է:

Հաջորդ պատճառը, թե ինչու է մարդ փոխվում պատերազմից հետո, արժեքների վերագնահատումն է: Ռազմադաշտում դա շատ արագ է կատարվում: Փողը, կարգավիճակը, «ձեռք բերել» անցնում են երկրորդ պլան: Առաջ են անցնում գլոբալ արժեքները՝ հավատարմությունը, նվիրվածությունը, ազնվությունը: Պատերազմում ամեն ինչ կան սպիտակ է, կան սև: Կան ընկեր, կա թշնամի: Ընկերը պաշտպանում է թեզ, տակի է կյանքը, դու էլ՝ նրա համար: Այնտեղ ամբույլատրելի է, որ թեզ խաբեն, որովհետեւ կյանքի ու մահվան հարց է:

Բայց վերադառնալով խաղաղ կյանքին՝ նա տեսնում է, որ այստեղ ամեն ինչ հին պես է: Այնտեղ կռվում են եւ զոհվում իր զինակիցները, այստեղ մարդիկ զվարճանում են, մեկը աղջկա է խոսեցնում, մյուսը դժգոհ է, որ հագուստի ընտրանի չունի: Մարտիկի համար սա խորթ է. այնտեղ կյանք ու մահ է, իսկ այստեղ մարդիկ

դատարկ բաներ են անում: Այդ անհամապատասխանությունը եւս զրգռող հզոր գործոն է:

Պատերազմի ժամանակ զինվորի մարտական ընկերներն են դառնում ամենամոտիկ մարդիկ: Կնոջից նրան կարող են «հեռացնել» միասին չկռվելու, մարտական առաջադրանքը համատեղ չկատարելու, մահից նրան չփրկելու հանգամանքները: Դրանից բացի, հարազատները ոչ միշտ են հասկանում, թե ինչ է ապրել զինվորը: Հաճախ, երբ փորձում են պատմել կուտակվածը, նրանց ասում են. «Բավական է խոսել կռվի մասին: Հիմա կռիվ չկա, մոռացիր: Մի ծանրաբեռնիր, առանց այն էլ վիճակը բարդ է»: Այո, շատ դեպքերի մասին իսկապես ծանր է անգամ լսելը, սակայն ապաքինումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդն սկսում է խոսել պրոբլեմից: Բայց եւ չպետք է անցնել հարցաքննության ու պահանջել, որ պատմի: Կարելի է սկսել չեզոք թեմաներից, գուցե եւ որեւէ զվարճալի պատմությունից: Աստիճանաբար նա կբացվի, կպատմի, թե ինչ կա իր հոգում: Եթե ինչ-որ բան էլ սկսի պատմել, արդեն լավ է, որովհետեւ նա սովորաբար փակ է այն մարդկանց հետ, ովքեր չեն եղել իր կողքին: Հնարավոր է, որ պատմելիս նրան համակեն հիշողությունները, վերհանվեն ախավոր բաներ, որոնք նա ապրել է: Իհարկե, ամեն մեկը չէ, որ կարող է լսել այդ ամենը եւ ապրումակցել, բայց եւ վախեցած դեմք անել ու գրույցից փախչելն էլ ելք չէ: Զգուշությամբ պետք է բարձրացնել այդ թեմաները: Նա կպատմի, երբ պատրաստ կլինի:

Ինչո՞ւ են պատերազմի շատ վետերաններ հնարավորություն փնտրում վերադառնալ բանակ: Մարտական գործողությունների գոտում մարտիկների մոտ բարձր է աղերսալիցի մակարդակը: Խաղաղ կյանքի պայմաններում հորձնային մակարդակը հանկարծակի ընկնում է, մարդը սկսում է դատարկություն զգալ: Նա ուզում է վերադառնալ այնտեղ, որտեղ հուզական վերելք է ապրել: Դա աղերսալիցից կախվածություն է: Այդ դեպքում կարող են օգնել աղերսալիցը կառավարելի ձեռով բարձրացնող գործողություններն ու զբաղմունքները, որոնցից են լեռնային տեղերով արշավները, սպորտի որոշ ձեւեր, վագրը, էքստրիմի տարրեր պարունակող ցանկացած ակտիվություն:

Բանակ վերադառնալ ցանկանալու պատճառներից է նաեւ այն, որ պատերազմից հետո շատերն առօրյա կյանքի իմաստը չեն գտնում: Կռիվի ժամանակ հստակ նպատակ կար՝ պաշտպանել սեփական հողը: Վերադառնալով՝ ապակոդմորոշվում են, չեն գտնում իրենց, այլ կերպ են նայում կյանքին: Պատերազմը նոր հմտություններ, գիտակցություն նոր մակարդակ է ձեւավորում: Ինչպես որ մեք անձնային աճի թրեմինգ անցնենք կամ խելացի գրքեր կարդանք, իսկ նրանք դա արագացված ռեժիմով անցնում են պատերազմում: Բայց առօրյա

կյանքում նրանք չեն տեսնում, թե որտեղ կարելի է կիրառել իրենց ներուժը: Այս դեպքում մեծ նշանակություն ունի, թե ինչ գործունեությամբ է զբաղվում պատերազմից վերադարձած մարդը: Օգտակար լինելու ցանկությունը, էներգիան պետք է ուղղորդել խաղաղ կյանքի որեւէ բնագավառում աշխատելուն:

Պատահում է, որ մտերիմները չեն հասկանում զինվորի ներքին վիճակը, պատրաստ չեն լինում աջակցել: Արտահայտվելու հնարավորություն չունենալով՝ նա ինքնամփոփ է դառնում, չի կարողանում շփվել մարդկանց հետ: Մինչդեռ չփվելը նրա համար շատ կարեւոր է: Իսկ ավելի շատ կարեւոր է չփվել հենց այն մարդկանց հետ, որոնք հասկանում են, թե ինչ է կատարվում իր հետ ու չեն արժեզրկում իր ապրումները: Այդ առումով մարտական ընկերների հետ շփումն հրաշալի հնարավորություն է ադապտացիայի համար:

Պատերազմից նոր վերադարձած մարտիկի ընտանիքի անդամներին, մասնավորապես կնոջը խորհուրդ է տրվում ընդունել նրա հոգեվիճակը որպես անխուսափելի: Կարգավորել կենցաղը, աշխատել սուր ձայնը չարձակել, չչրխկացնել դուռը, հատկապես՝ գիշերը: Պետք չէ կատարել հանկարծակի գործողություններ, մոտենալ նրան հետեւից, որը կարող է նրա կողմից դիտարկվել որպես հարձակում եւ ակամայից արձագանքվել: Ավելի լավ է կանչել նրան, որպեսզի նա հնարավորություն ունենա շրջվելու: Մի՛ վատթարացրեք վիճակը: Այո, պատերազմից եկած տղամարդիկ պրոբլեմներ են ունենում, ազդեցիկ են դառնում, ակնհույզ են չարաշահում, բայց չպետք է դա անընդհատ շեշտել, այլապես նա ակամայից կենթարկվի վարքի այն կարծրատիպին, որը նրանից սպասում են: Մի՛ սահմանափակեք մարտական ընկերների հետ նրա շփումը, հատկապես՝ առաջին ամիսներին: Դա այն միջավայրն է, որտեղ նրանք հասկանում են միմյանց, կարող են հանգիստ խոսել իրենց ապրումների մասին, հիշել կորցրած մարտական ընկերներին: Դա հենց այն պրոբլեմալիկ շփումն է, որը կօգնի վերադառնալ խաղաղ կյանք եւ վերագտնել իրեն: Ժամանակ է պետք, որպեսզի պատերազմից վերադարձած մարդը վերականգնվի: Տարբեր մարդկանց տարբեր ժամանակ է հարկավոր լինում: Չպետք է սսել, թե նյարդերը թույլ են կամ համեմատել ուրիշի հետ, որն այդպիսի արտահայտումներ չունի: Դրանով մարդուն չեք քաջալերի, այլ ցավ կպատճառեք եւ կկորցնեք նրա վստահությունը: Բոլորի մոտ ռազմական փորձը տարբեր է, հետեւապես եւ հոգեկանի ռեակցիաներն են տարբեր: Դա չի կարելի ընտրել:

Հիշեք, որ ձեր մտերիմը կվերականգնվի, բայց պետք է ժամանակ, համբերություն, հասկացողություն:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ
Հոգեբան

ՄՏԵՐ

ՊԱՏԵՐԱԶՍ... ԱԿՆԹԱՐԹՆԵՐ...



Խաղաղություն նկարելու համար ինձ գուճավոր մատիտներ են պետք, որովհետև գույների մեջ են մնացել անմահ հերոսների դեմքերը, շունչը, այն ամենը, ինչը կապված է նրանց հետ: Մի ուժ կա: Այն մենել չի սիրում: Դա մեր գեներ է, որ անգամ հողի տակ է մտնում մի պահ, իսկ հետո վեր հանում որպես փյուռիկ:

Հողը խաղաղությանը սպասել գիտի...

Ամենասովորական զգացողությունները հպարտությամբ են լցվում, եթե կանգնած ես զինվորի կողքին: Կանգնած սպասում ես նրա հերթական խոսքին, շարժմանը, արձագանքին, աչքերին, ժպիտին...

Իսկ երբ հարցնում է զինվորը, թե ինչու ես իր մասին գրում, պատասխանը մեկն է լինում. իսկ հերոսների մասին չե՞մ գրում: Ու այդտեղ հասկանում ես նրա համեստության ու հայրենավորումի չափը, այն ամենը, ինչը կա, այո, իրական է, ոչ թե այլ աշխարհից:

Պատերազմական օրեր էին: Հեռվում ծովան ալմազներ էր տարածվել, որ մտածում էի, որ մի քանի րոպե հետո մի պայթյուն էլ իմ կողքին կլինի, ու ես էլ չեմ լինի: Արագ էի քայլում: Այնքան զարմանալի էր, որ ճանապարհներին մարդ չկար: Այս ի՞նչ ժամանակներ են: Անգամ ապրիլյան պատերազմի ժամանակ

մարդիկ իրենց դարպասների մոտ նստում էին, մի երկու րոպե գրուցում: Կյանք կար: Այս պատերազմը շատ տարբերվեց:

Դիրքեր այցելելու ժամանակ զինվորներից մեկին հարցրի, թե կարոտե՞լ է տնեցիներին: Ասաց, որ այդ երկու տարին կարոտը Հայրենիքի հանդեպ սիրո միջով է անցնում, և մի այլ տեսակ զգացում է այս պարագայում: Իսկապես, հիմա կարոտում եմ նրանցից յուրաքանչյուրին: Ես զգացել ու տեսել եմ նրանց անպարտ կեցվածքը, պայքարող ոգին ու հաղթելու ուժը: Նրանք երբեք չեն պարտվել ու չեն պարտվելու...

Ճակատագիրը կյանք է մաշում: Նրա հետ չորս օր անհանգիստ նստած սպասում եմք, որ մի բան կլինի ու շուտ կավարտվի նախորդի պես:

Այդ չորս օրը...

Ցավից փողոցներն աղմկում էին: Չէի կարողանում քայլել, որովհետև կարող էի մի աղմուկի պատճառ դառնալ: Ցավը սիրում է ճակատագրի հետ ապրել, դրա համար ցավին հակառակ գնացի: Այս անգամ էլ ցավը գրկած, ձևացնելով, թե ոչինչ չեմ զգում, ուշադրություն չդարձրի երկնքի ասելիքին:

Հեռախոսս անընդհատ զանգում էր: Բոլորը հրավիրում էին իրենց տները, բայց ես մեր տանը նստած նայում էի ուրիշների փլվող, ավերակ դարձած տներին: Իսկ սա ինչպիսի՞ ճակատագիր է:

Նայում էի... մտածում...

Այս մոլորակն իմն է: Անունը՝ Արցախ, որ ոչ մի քանի հետ չեմ փոխի: Նա իմ ամենամտերինն է: Այստեղ արծիվները չեն քնում...

Արծիվները կենսագրությունն են հաստատում պահում:

Իսկ ես կարո՞ղ եմ հեռու երկրում թողնել բոլոր գույները: Չէ, այդպես չի կարող լինել: Ասում են՝ ուրիշ պատի համար նախատես-

ված գույնը մեկ այլ պատի տեղ է երևում: Դրա համար ամբողջ գույները Արցախի համար ենք պահում: Է՛հ, այստեղ կարմիրն է շատ... ամենաշատն է:

Ձեռքերս ուզում են ուրիշ տեղ հասցնել, բայց ես հրաժարվում եմ: Աչքերի ու ձեռքերի համատեղելի կապով մոլորվում է եզերքը: Աչքերս գտնում են Պիկասոյի գլուխգործոցներն ու ընկղմվում նրանց մեջ:

Ես էլ այստեղ չեմ...

Սա ուրիշ աշխարհ է, բայց չեմ հարմարվում, ու նորից եմ տանս պատերը ճաքում՝ հեռանալու ճանապարհի կեսին: Ուզում եմ գրկել այդ պատը, բայց վերջում պատերազմ է դառնում: Նա էլ իմը չէ...

...Պատերազմը երբեք չի ուշանում: Երկի կյանքում ամենամահապաճան հիմարն է պատերազմը, որ մեզ շատ է սիրում, ու դա փոխադարձ չէ:

Այստեղ ցավը մի քանի ժամ կարոտի մասին է պատմում: Ժամերը շատ արագ փլվում են կեսգիշերին, ու խելագարվում են ցերեկն ու մութը՝ իրենց անսովոր հայացքներով: Ամեն բացվող լույս մի նոր ցավ է կիսում՝ հորիզոնի շուրթերին նայելով:

44 օր. ցավի համառոտ արտացոլանք և սպասումի անթափանց հայելի:

Այդ օրերից ավել է, որ հողը ջուր է ուզում ապրելու համար: Տարվա եղանակ չմնաց: Չարագույժ աշունը մի գուլպա է գործում ու ասում է՝ սա էլ է հերիք: Չմոտեց: Պատերազմը մեր ներսում է:

Երկինքը ասես մի անտաղանդ նկարչի ստեղծագործություն լինի: Ինձ կներեք այս

խոսքերի համար: Հիմա ես, ինչպես բոլոր ծառերը, նույն ձև տխուր եմք: Կարծես կյանքը կա, բայց ապրել չգիտենք: Ապրելը ուրիշների համար էր:

Մատներս գիշերվա և ցերեկվա տարբերությունը չեն զգում: Այսպես դեռ չէր եղել, անսովոր է:

Անսովոր է նաև հողը, որ անընդհատ քաջություն է ուզում, որ իր վրայով թողնի քայլես: Իսկ այդ քայլերը... Ինչքա՞ն պատերազմների միջով են անցել, որ արդեն խեղդում են ցավը:

Լեռը քառասուն խոստում է տվել բոլորին: Լեռը ամաչում է գլուխը բարձրացնել:

Պատուհանի նայող լույսը ցավից մեռնում է: Դիմանալ չկա: Հայելու մեջ մենք ենք՝ չդիմացողներս, չնայած համբերում ենք ու հանդուրժում: Մեկս մյուսի շարունակությունն ենք, մեկս մյուսի կտրված մասը:

Մառախուղը չի դադարում ծածկել մեզ: Ինչքան դժվար լինի՝ դիմանում ենք, չնայած մառախուղի մեջ էլ կա պատերազմի հոտը:

Ծանր եղանակ է դրսում և ներսում: Եղանակի միջից ստվեր է դուրս գալիս ու կյանք է առնում: Նա շարունակվում է քայլել մի արահետով, որն արդեն մերը չէ, բայց մերն է եղել: Անձրևը թաքում ջրում է այդ արահետը:

Մի տեսակ անշոշափելի են աշունը, ծմբերը: Անշուք օրերի շքեղության մեջ ե՞րբ է մոլորակը (կամ կյանքը) թույլ տալու, որ հաղթանակի համար արյուն չթափվի:

Վովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՊԱՐԱՊՈՔՆԵՐ

Երբ մահանում է հայտնի աներիկացի երգիչ Զորք Կառլինի կինը, նա գրում է այս տպավորիչ հոդվածը, որն արդիական է մեր օրերում:

«Մեր ժամանակների պարապոքսն այն է, որ մենք ունենք բարձր շինություններ, բայց ցածր համբերություն, լայն պողոտաներ, բայց նեղ հայացքներ: Մենք ծախսում ենք շատ, բայց ունենք քիչ, գնում ենք ավելի շատ, բայց դրանից ուրախանում ավելի քիչ: Ունենք մեծ տներ, բայց փոքր ընտանիքներ, լավագույն հարմարություններ և ավելի ու ավելի քիչ ժամանակ:

Մենք ունենք լավագույն կրթություն, բայց քիչ իմաստություն, ունենք բազմաթիվ գիտելիքներ, բայց գնալով ավելի թերի ենք վերլուծում իրադրությունը, մենք ունենք շատ փորձագետներ, բայց և ավելի շատ խնդիրներ, ավելի լավ բժշկություն և ավելի վատ առողջություն:

Մենք խոսում ենք չափազանց շատ, սիրում չափազանց քիչ ու ատում չափազանց հաճախ: Գիտենք ինչպես կենդանի մնալ, բայց չգիտենք ինչպես ապրել: Ավելացնում ենք տարիներ մարդկային կյանքին, բայց չենք ավելացնում կյանք այդ տարիներին: Հասանք Լուսինի ու վերադարձանք, բայց դժվարությամբ ենք փողոցն անցնում ու ծանոթանում մեր հարևանների հետ: Հաղթահարում ենք տիեզերական տարածությունները, բայց ոչ հողերը...

Սա արագ սննդի ու վատ մարսողության ժամանակաշրջանն է, մեծ մարդկանց ու փոքր հոգիների, արագ շահույթի ու բարդ փոխհարաբերությունների ժամանակաշրջանը, երբ աճում են ընտանեկան շահույթներն ու ապահարգանքների թիվը, կառուցվում գեղեցիկ տներ ու քանդվում օջախներ: Սա կարճ տարածությունների, մեկանգամյա օգտագործման մանկական տակդիրների, մեկօրյա բարոյականության, ավելորդ

քաշի ու դեղահաբերի ժամանակաշրջանն է, դեղահաբերի, որոնք հանգստացնում են մեզ, գրգռում են մեզ, սպասում են մեզ...

Սրանք ժամանակներ են, երբ այնքան շատ բան կա ցուցադրված սրահներում և ոչինչ՝ պահեստներում: Ժամանակներ, երբ տեխնոլոգիաները թույլ են տալիս, որ այս նամակը հասնի ձեզ, և երբ դուք ինքներդ եք որոշում՝ տարածե՞լ այն, թե՞ ուղղակի ջնջել:

Ավելի շատ ժամանակ հատկացրեք նրանց, ում սիրում եք, չե՞ որ նրանք ձեզ հետ ընդմիշտ չեն: Բարի խոսքեր ասեք նրանց, ովքեր ներքևից հիացնում են ձեզ են նայում, քանի որ այդ փոքրիկ էակները շուտով կմեծանան ու միշտ ձեր կողքին չեն լինի: Ջերմորեն գրկեք ձեր մտերիմ մարդուն, քանի որ դա միակ գոհարն է, որը կարող եք նրան նվիրել ի սրտե...

Ժամանակ գտե՛ք սիրելու համար, շփման համար, կիսվելու համար...»:

«ԼՈՒՍԱՐԱՐ» 2021 թվականի բաժանորդագրություն

Պատերազմը ցավ ու վիշտ բերելուց զատ՝ նաև փոխել է մեր կյանքի բնականոն դիմաց: Անցյալն ու ներկան հիմա մեզ նույն դեմքով են ներկայանում, իսկ ապագան մշուշոտ է: Ո՛ր է տանում ճամփան, որ ուրիշներն են, ցավոք, բացել մեզ համար: Հիմա հարցերն ավելի շատ են, քան պատասխանները, որոնք ոչ թե պիտի ուրիշից ստանանք, այլ հենց ինքներս գտնենք: Գտնենք ու քննարկենք, վերլուծենք ու համադրենք, բանավիճենք ու կիսվենք... Եվ կյանքն աստիճանաբար կվերադառնա իր հունի մեջ, հավատացե՛ք:

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը եղել և մնում է հանրապետության բոլոր մանկավարժների վստահելի գրուցակիցը: Համախմբված կրկին մեր սիրելի թերթի շուրջ:

Տարեկան բաժանորդագինը դարձյալ նույնն է՝ 3000 դրամ:

Սպասում ենք բոլորիդ նորանոր հանդիպումների հույսով:

ԼՈՒՍԱՐԱՐ ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Ստեփանակերտ, 3. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorceter@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մասով: Ստորագրված է տպագրության 23.01.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: